





# Ի. ՍՏԱԼԻՆ

---

ԱԶԳԱՅԻՆ ՄՈՄԵՆՏՆԵՐԸ  
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՅԵՎ,  
ՊԵՏԱԿԱՆ  
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ



ՀԱՅԳՈՒՍՆՐԱՆ • 1987 • ՅԵՐԵՎԱՆ



Ի. ՄՏԱԼԻՆ

323.1(47)

Ա

ԼՐԱԿ

ՅՈՒՐ

ՄՏՈՒԳՎԱԾ Է 1961 Ք.

ԱԶԳԱՅԻՆ ՄՈՍԵՆՏՆԵՐԸ  
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՅԵՎ ՊԵՏԱԿԱՆ  
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Զեկուցում ՌԿ(Բ)Կ XII համագումարում 1928 Ք. ապրիլի 23-ին

967



A  $\frac{\text{II}}{6820}$

И. СТАЛИН  
НАЦИОНАЛЬНЫЕ МОМЕНТЫ  
В ПАРТИЙНОМ И ГОСУДАРСТВЕННОМ  
СТРОИТЕЛЬСТВЕ

Агмпартиздат, Ереван, 1937

Ընկերնե՛ր: Հոկտեմբերյան հեղափոխութեան ժամանակից սկսած մենք յերրորդ անգամն և քննարկում ենք ազգային հարցը. առաջին անգամը—VIII համագումարում, յերկրորդ անգամը—X և յերրորդ անգամը—XII համագումարում: Արդյոք սա նշան չե՞ր այն բանի, թե ինչ—վոր բան սկզբունքորեն փոխվել և ազգային հարցի մասին ունեցած մեր հայացքներում: Վո՛չ, ազգային հարցի վերաբերյալ սկզբունքային հայացքը նույնն և մնացել, ինչ վոր եր մինչև Հոկտեմբերը, և նրանից հետո: Բայց X համագումարի ժամանակից սկսած փոխվել և միջազգային իրադրությունը՝ հեղափոխութեան այն ծանր ռեզերվների տեսակարար կշիռն ուժեղանալու խմատով, վոր ներկայումս Արևելքի յերկիրներն են ներկայացնում: Սա՛ առաջինը: Յերկրորդ, X համագումարի ժամանակից սկսած մեր կուսակցությունը նեպի կապակցութեամբ նույնպես ունեցել և միջանի փոփոխություններ ներքին դրութեան մեջ: Այս բոլոր նոր գործոնները անհրաժեշտ և հաշվի առնել, տալ նրանց հանրադրումարը: Այս խմատով կարելի յե խոսել ազգային հարցի նոր դրման մասին XII համագումարում:

Ազգային հարցի միջազգային նշանակությունը: Ձեզ հայտնի յե, ընկերնե՛ր, վոր մենք հանդիսանում ենք, մենք վորպես խորհրդային Ֆեդերացիա, պատմական բախտի կամքով ներկայումս հանդիսանում ենք համաշխարհային հեղափոխութեան առաջավոր ջոկատը: Ձեզ հայտնի յե, վոր համակապիտալիստական Ֆրոնտը առաջին անգամ մենք ճեղքեցինք՝ բախտի կամքով ամենքից առաջ դանդաղելով: Ձեզ հայտնի յե, վոր մեր առաջչարժման ընթացքում մենք հասանք մինչև Վարչապա, իսկ հետո նահանջեցինք՝ ամբողջով այն դիրքերում, վոր մենք ամենից ամուր ելինք համարում: Այդ մոմենտից սկսած մենք անցանք նեպին և այդ մոմենտից սկսած մենք հաշվի առանք միջազգային հեղափոխական շարժման տեմպի դանդաղումը, այդ մոմենտից սկսած մեր քաղաքականությունը դարձավ արդեն վոչ թե հարձակողական, այլ

սլաշտպանողական: Գնալ առաջ այն բանից հետո, յերբ մենք Վարչապալաի մոտերքում անհաջողութիւն կրեցինք (ճամբարութիւնը չթագցնենք), գնալ առաջ մենք չեյինք կարող, վորովհետեւ մենք ուսկ եյինք անում կտրվել թիկունքից, իսկ այն մեղանում գյուղացիական է, և, վերջապես, մենք ուսկ եյինք անում չափազանց հեռու գնալ հեղափոխութեան այն ռեզերվներէց, վոր տրված են բախտի կամքով՝ Արեմտայան ու Արեւելյան ռեզերվներէց: Ահա թե ինչու մենք շրջադարձ ձեռնարկեցինք ներսում նսպի կողմը և դրսում՝ առաջարժման դանդաղեցման կողմը՝ վրձուելով, վոր պետք է շունչ առնել, բուժել մեր վերքերը, — առաջավոր ջոկատի, պրոլետարիատի վերքերը, կոնտակտ ստեղծել գյուղացիական թիկունքի հետ, հետագա աշխատանք կատարել ռեզերվներէ մեջ, վորոնք հետ են մնացել մեղնից, — արեմտայան ռեզերվներէ և արեւելյան ծանր ռեզերվներէ մեջ, վորոնք համաշխարհային կապիտալիզմի հիմնական թիկունքն են կազմում: Ազգային հարցը քննարկելիս խոսքն ահա այս ռեզերվներէ մասին է, — ծանր, արեւելյան ռեզերվներէ մասին, վորոնք դրա հետ միասին համաշխարհային իմպերիալիզմի թիկունքն են կազմում:

Յերկուսից մեկը՝ կամ մենք իմպերիալիզմի խորը թիկունքը, — արեւելյան դաղութային ու կիսադաղութային յերկիրները, — կշարժենք, կհեղափոխականացնենք և դրանով կարագացնենք իմպերիալիզմի անկումը, կամ մենք այստեղ կվերպենք և դրանով կամբացնենք իմպերիալիզմը ու դրանով կթուլացնենք մեր շարժման ուժը: Հարցը այսպես է դրված:

Իսկ այն է, վոր ամբողջ Արեւելքը Հանրապետութիւններէ մեր Միութեան վրա նայում է իբրև փորձադաշտի վրա: Կամ մենք այս Միութեան շրջանակներում ճիշտ կլուծենք ազգային հարցը՝ նրա դործնական կիրառման մեջ, կամ մենք այստեղ, այս Միութեան շրջանակներում, կհաստատենք ժողովուրդների միջև իսկապես յեղբայրական հարաբերութիւններ, իսկական համագործակցութիւն, — և այն ժամանակ ամբողջ Արեւելքը կբռնանի, վոր նա հանձին մեր Փեղերացիայի ազատագրութեան դրոշ ունի, ունի առաջավոր ջոկատ, վորի հետքերով նա պետք է գնա, և այդ կլինի համաշխարհային իմպերիալիզմի կրակի սկիզբը: Կամ թե՛ մենք այստեղ, ամբողջ Փեղերացիայի կազմի մեջ սխալ թույլ կտանք, կխախտենք առաջներում ճնշված ժողովուրդների վստահութիւնը դեպի Ռուսաստանի պրոլետարիատը, Հանրապետութիւններէ Միութիւնը կզրկենք Արեւելքի աչքում

նրա ունեցած ճշդողական ուժից, և այն ժամանակ կտանի իմպերիալիզմը, տանուլ կտանք մենք:

Այս է ազգային հարցի միջազգային նշանակութունը:

Ազգային հարցը մեզ համար նշանակութուն ունի նաև ներքին դրության տեսակետից, վոչ միայն այն պատճառով, վոր թվական տեսակետից, նախկին պետական (Державная) ազգը մոտ 75 միլիոն է, իսկ մնացած ազգերը՝ 65 (սա, այնուամենայնիվ, քիչ է), և վոչ էլ միայն այն պատճառով, վոր առաջներում ճնշված ազգերը դրախում են տնտեսական դարգացման համար ամենից ավելի հարկավոր շրջանները և ռազմական ստրատեգիայի տեսակետից՝ ամենից ավելի կարևոր կետերը,—վոչ միայն այս պատճառով, այլ ամենից առաջ այն պատճառով, վոր այս յերկու տարում մենք այսպես կոչված նեպ մտցրինք, իսկ սրա կապակցությամբ ռուսական նացիոնալիզմն սկսեց աճել, ուժեղանալ, ծնվեց ամենովխականության դադափարը, ցանկություններ են թափառում խաղաղ ճանապարհով անելու այն, ինչ չհաջողվեց անել Դենիկինին, այսինքն ստեղծել այսպես կոչված «միասնականը և անբաժանելին»:

Յեվ, այսպիսով, մեր ներքին կյանքում նեպի կապակցությամբ մի նոր ուժ է ծնվում—վելիկոռուսական շովինիզմը, վորը բուն է դրել մեր հիմնարկներում, թափանցում է վոչ միայն խորհրդային, այլև կուսակցական հիմնարկները, թափառում է մեր ֆեդերացիայի բոլոր անկյուններում և տանում է դեպի այն, վոր յեթե մենք այդ նոր ուժին վճռական հակահարված չտանք, յեթե մենք արմատից չկտրենք այն—իսկ նեպական պայմաններն աճեցնում են այդ ուժը,—մենք ռիսկ ենք անում կանգնելու նախկին պետական ազգի պրոլետարիատի և առաջներում ճնշված ազգերի դյուղացիների միջև կապերը խզվելու պատկերի առջև,—մի բան, վոր հավասար է պրոլետարիատի դիկտատուրայի խաբխրման:

Բայց նեպը աճեցնում է վոչ միայն ռուսական շովինիզմ, նա աճեցնում է նաև տեղական շովինիզմներ՝ մանավանդ այն հանրապետություններում, վորոնք միքանի ազգություններ ունեն: Յես նկատի ունեմ վրաստանը, Ադրբեջանը, Բուխարան, մասամբ կարելի չէ նկատի առնել Թուրքեստանը, վորտեղ մենք ունենք միքանի ազգություններ, վորոնց առաջավոր տարրերը, դուցե, շուտով սկսեն առաջության համար կոնկուրենցիայի մեջ մտնել միմյանց դեմ: Այս տեղական շովինիզմները, իհարկե, իրենց ուժով այն վտանգը չեն ներկայացնում, ինչ վելիկոռուսական շո-

վինիլիզմն և ներկայացնում: Բայց նրանք, այնուամենայնիվ, վտանգ են ներկայացնում՝ սպառնալով մեզ՝ միջանի հանրասեփականներ ղարձնել ազդեացին խառնակչութեան ասպարեզ, խախտել այնտեղ ինտերնացիոնալիզմի կապերը:

Սրանք են միջազգային ու ներքին բնութի այն հիմքերը, վորոնք խոստում են ազդեացին հարցի կարեւոր, առաջնակարգ նշանակութեան մասին՝ առհասարակ և ավլալ մոմենտում՝ մանաւանդ:

Ի՞նչն և ազդեացին հարցի դասակարգային ելութեանը: Ի՞նչ և ազդեացին հարցը: Ազգային հարցի դասակարգային ելութեանը փոխհարաբերութեանները վորոշելն և, —յես խոստում եմ մեր իրադրութեան մասին, խորհրդայինի մասին, —նախկին պետական ազդի պրոլետարիատի և նախկին ճնշված ազգութեաններէ գյուղացիութեան ճիշտ փոխհարաբերութեանները վորոշելը: Չորման հարցն այստեղ ավելի քան բավականաչափ քննարկվեց, բայց զորման հարցն ընկ. ընկ. Կամենովի, Կալինինի, Սոկոլնիկովի զեկուցման կապակցութեամբ, մինչև իսկ ընկ. Ռիկովի և ընկ. Տրոցկու զեկուցման կապակցութեամբ քննարկելիս, այդ քննարկման ժամանակ նկատի յեր առնվում դլխավորապես ոռւս պրոլետարիատի վերաբերմունքը դեպի ոռւս գյուղացիութեանը: Այստեղ, ազգային բնադալատում, մենք ավելի բարդ մեխանիկա ունենք: Այստեղ մենք գործ ունենք նախկին պետական ազգին սրտականող և մեր ամբողջ Ֆեդերացիայի պրոլետարիատի ամենակուլտուրական խալը հանդիսացող պրոլետարիատի ու գյուղացիութեան՝ առավելապես առաջներում ճնշված ազգութեաններէ գյուղացիութեան միջև, ճիշտ փոխհարաբերութեաններ հաստատելու հարցի հետ: Այս և ազգային հարցի դասակարգային ելութեանը: Յեթե պրոլետարիատին հաջողվի այլազգի գյուղացիութեան հետ հաստատել այնպիսի հարաբերութեաններ, վորոնք կարողանան խարխել ամեն մի ոռւսական բանի նկատմամբ յեղած այն անվստահութեան մնացուկները, վոր ցարիզմի քաղաքականութեամբ տասնյակ տարիներով սնուցվում ու արմատավորվում եր, —ավելին՝ յեթե ոռւս պրոլետարիատին հաջողվի հասցնել լիակատար փոխադարձ ըմբռնման ու վստահութեան, իրական միութեան հաստատել վորչ միայն ոռւս պրոլետարիատի ու ոռւս գյուղացիութեան միջև, այլև ոռւս պրոլետարիատի ու այլ ազգութեաններէ գյուղացիութեան միջև, ապա ինդիքը լուծված կլինի: Սրա համար անհրաժեշտ և, վորպետեղի պրոլետարիատի իշխանութեանն այլազգի գյուղացիութեան համար նույնքան հարազատ լինի, վորքան ոռւս գյուղացիութեան համար և:

Արդարեւս խորհրդային իշխանութիւնն այսպիսի դուրսացիութեան համար եւ հարազատ դառնա՝ անհրաժեշտ է, վոր այդ իշխանութիւնը նրա համար հասկանալի լինի, վոր այն մայրենի լեզվով գործի, վոր դպրոցներն ու իշխանութեան մարմինները կառուցվին լեզուն, բարբերը, սովորութիւնները, կենցաղն իմացող սեղացիներէց: Խորհրդային իշխանութիւնը, վոր մինչև վերջին ժամանակներս ուստական իշխանութիւն է հանդիսացել, միայն այն ժամանակ և միայն այնքան կլինի վոչ միայն ուստական, այլև միջազգայն (международная), առաջներում ճնշված ազգութիւնները դուրսացիները համար հարազատ, յերբ այդ յերկիրները հանրապետութիւններում հիմնարկներն ու իշխանութեան մարմինները կխոսեն ու կգործեն մայրենի լեզվով: Այս և ազգային հարցի հիմքերէց մեկը՝ առհասարակ, խորհրդային իրադրութեան մեջ՝ մանաւանդ:

Վո՞րն է ազգային հարցի լուծման բնորոշ գիծը տվյալ մոմէնտում, 1923 թվականին: Ազգային դժով լուծում պահանջող հարցերը ի՞նչ ձև են ընդունել 1923 թվականին: Մեր Ֆեդերացիայի ժողովուրդների միջև տնտեսական դժով, ռազմական դժով, քաղաքական դժով համազործակցութիւն հաստատելու ձև: Յեւ նկատի ունեմ միջազգայն հարաբերութիւնները: Ազգային հարցը, վորը հիմքը կազմում է նախկին պետական ազգի պրոլետարիատի և այլազգի դուրսացիութեան միջև ճիշտ հարաբերութիւններ հաստատելու խնդիրը, տվյալ մոմէնտում ընդունում է այն ժողովուրդների համազործակցութեան ու յեղբայրական համակցութեան առանձին ձև, վորոնք՝ առաջներում անջատված եյին և վորոնք այժմ միավորվում են միասնական պետութեան շրջանակներում: Ահա ազգային հարցի ելութիւնն այն ձևով, ինչ ձև նա ընդունել է 1923 թվականին: Պետական այդ միավորման կոնկրետ ձևը Հանրապետութիւնների այն Միութիւնն է, վորի մասին մենք խոսեցինք խորհուրդների համագումարում տակավին անցյալ տարվա վերջերին, և վորը մենք այն ժամանակ հիմնադրեցինք:

Այդ միութեան հիմքը՝ Միութեան անդամները կամավորութիւնն ու իրավական հավասարութիւնն են: Կամավորութիւնն ու հավասարութիւնը՝ այն պատճառով, վոր մեր ազգային ծրագրի յեւրկեսան ազգութիւնները ինքնուրույն պետական գոյութեան իրավունքի կետն է, — այն, ինչ առաջներում ինքնորոշման իրավունք եր կոչվում: Յենեւով սրանից՝ մենք վորոշակի պետք է ասենք, վոր ժողովուրդների վոչ մի միութիւն, ժողովուրդների

վոչ մի միավորում իրրև միասնական պետութիւնն չի կարող հաստատուն լինել, յեթե նա հիմնված չէ լիակատար կամավորութեան վրայ, յեթե ավյալ ժողովուրդը, յեթե ժողովուրդներն իրենք չեն ուզում միավորվել: Յերկրորդ հիմքը՝ Միութեան կողմի մեջ մտնող ժողովուրդների իրավական հավասարութիւնն է: Յեկ այդ հասկանալի յե: Յես չեմ խոսում փաստական հավասարութեան մասին, այս մասին յես հետադաշում կասեմ, վորովհետև առջ անցած ազգութիւնների ու հետամնաց ազգութիւնների միջև փաստական հավասարութիւն հաստատելը շատ բարդ, շատ ծանր, մի շարք տարիներ պահանջող դործ է: Յես այստեղ իրավական հավասարութեան մասին եմ խոսում: Այստեղ հավասարութիւնը նրանով է արտահայտվում, վոր բոլոր հանրապետութիւնները, ավյալ դեպքում չորս հանրապետութիւն՝ Անդրկովկասը, Բելոռուսիան, Ուկրաինան ու ՌՍՖՍՀ, վորոնք Միութեան կողմի մեջ են մտնում, միևնույն չափով են սզտվում Միութեան բարեքներից և միաժամանակ հոգուտ Միութեան միևնույն չափով են հրաժարվում անկախութեան իրենց վորոչ իրավունքներից: Յեթե արտգործժողկոմատ չեն ունենալու ՌՍՖՍՀ, Ուկրաինան, Բելոռուսիան, Անդրկովկասյան հանրապետութիւնը, ապա պարզ է, վոր այս արտգործժողկոմատները վերացնելիս և Հանրապետութիւնների Միութեան մեջ ընդհանուր արտգործժողկոմատ ստեղծելիս տեղի կունենա վորոչ սահմանափակում այն անկախութեան, վոր ունեցել են այդ հանրապետութիւնները և վորը Միութեան մեջ մտնող բոլոր հանրապետութիւնների համար հավասարաչափ է սահմանափակվել: Պարզ է, վոր, յեթե այդ հանրապետութիւններն առաջներում իրենց արտաժողկոմատներն են ունեցել, իսկ այժմ այդ արտաժողկոմատները վերացվում են՝ ինչպես ՌՍՖՍՀ մեջ, այնպես էլ մյուս հանրապետութիւններում՝ Հանրապետութիւնների Միութեան կից ընդհանուր արտաժողկոմատ ստեղծելու համար, ապա այստեղ ևս տեղի յե ունենում այն անկախութեան վորոչ սահմանափակումը, վորը առջ լիակատար ձևով կար և վորը այժմ կրճատվել է՝ հոգուտ ընդհանուր Միութեան և այլն և այլն: Վոմանք զուտ սխոլաստիկ հարց են տալիս. իսկ ի՞նչ է, միավորումից հետո հանրապետութիւնները անկախ են մնում արդյոք: Այդ սխոլաստիկ հարց է: Նրանց անկախութիւնը սահմանափակվում է, վորովհետև ամեն մի միավորում առաջներում յեղած իրավունքների մի վորոչ սահմանափակում է նրանց վերաբերմամբ, ովքեր միավորվել են: Բայց այստեղ անկախութեան

տարրերը մնում են, անսպասան, յուրաքանչյուր հանրապետու-  
թյան նկատմամբ, վորովհետև յուրաքանչյուր հանրապետություն  
Միության կազմից միակողմանիորեն դուրս դալու իրավունք ու-  
նի: Ահա թե վորոնք են անկախության տարրերը, ահա սրտեն-  
ցիայում անկախության այն մաքսիմումը, վորը մնում է Միու-  
թյան մեջ մտնող հանրապետություններից յուրաքանչյուրի հա-  
մար և վորը նա միշտ կարող է իրականացնել:

Այսպես ուրեմն, մեր իրադրության մեջ տվյալ մոմենտում  
աղբալին հարցի կոնկրետ ձևը հանդել է ժողովուրդների տնտե-  
սական, արտաքին-քաղաքական և ռազմական համադրձակցու-  
թյուն սահմանելու հարցին: Մենք պետք է այս հանրապետու-  
թյունները այս դժբերով միավորենք իբրև միասնական միություն,  
վոր կոչվում է ՌՍՀՄ: Տվյալ մոմենտում սրան են հանդել աղ-  
բալին հարցի կոնկրետ ձևերը:

Բայց հեքիաթը հեշտ է ասվում, սակայն դորձը շուտ չի  
արվում:

Բանն այն է, վոր մենք մեր իրադրության մեջ ունենք մի  
ամբողջ շարք գործոններ, վորոնք վոչ միայն նպաստում են  
ժողովուրդների իբրև մի պետություն միավորվելուն, այլև ար-  
դելակում են այդ միավորումը:

Աջակցող գործոնները ձեզ հայանի յեն. ամենից առաջ ժողո-  
վուրդների տնտեսական մերձեցումը, վորը հաստատվել է դեռ-  
ևս մինչև խորհրդային իշխանությունը և ամրապնդված է խոր-  
հրդային իշխանության կողմից, ժողովուրդների միջև աշխա-  
տանքի վորոչ բաժանումը, վորը հաստատվել է մեզանից առաջ և  
ամրապնդվել է մեր կողմից, խորհրդային իշխանության կող-  
մից, — դա մի հիմնական գործոն է, վորը նպաստում է հան-  
րապետությունների իբրև Միություն միավորվելուն: Միավոր-  
մանը նպաստող յերկրորդ գործոն պետք է համարել խորհրդային  
իշխանության բնությունը: Այս հասկանալի յե: Ռորհրդային իշ-  
խանությունը բանվորների իշխանություն է, պրոլետարիատի  
դիկտատուրա, վորն իր բնությամբ տրամադրում է, վոր Միու-  
թյան մեջ մտնող հանրապետությունների ու ժողովուրդների աշ-  
խատավոր մասսաները բարեկամաբար տրամադրվեն միմյանց  
նկատմամբ: Այս հասկանալի յե: Յեվ յերրորդ գործոնը, վոր ա-  
ջակցում է միավորմանը, դա իմպերիալիստական շրջապատումն  
է, վորն այն միջավայրն է, վորի պայմաններում հարկ է լինում  
գործելու Հանրապետությունների Միությանը:

Բայց կան և այնպիսի գործոններ, վորոնք խանդարում են

այդ միավորմանը, արգելակում են այդ միավորումը: Հանրապետութիւնների իբրև միասնական միութիւն միավորվելու գործըն արգելակող հիմնական ուժը—դա այն ուժն է, վոր աճում է մեզանում, ինչպես յես ասացի, նեպի պայմաններում. դա վելիկոուսական շովինիզմն է: Բնավ ել պատահականութիւն չէ, ընկերնե՛ր, վոր սմենովելսականները<sup>1)</sup> բազմաթիւ կողմնակիցներ են ձեռք բերել խորհրդային պաշտոնյաների մեջ: Դա բնավ պատահականութիւն չէ: Պատահականութիւն չէ և այն, վոր պարոն սմենովելսականները գովում են կոմունիստ-բոլշևիկներին, կարծես թէ ասելով՝ ինչքան կամենաք խոսեցեք բոլշևիզմի մասին, ինչքան կամենաք շաղակրատեցեք ձեր ինտերնացիոնալիստական տենդենցների մասին, իսկ մենք հո գիտենք, վոր այն, ինչ չհաջողվեց անել Դենիկինին, այն դուք կանեք, վոր մեծ Ռուսաստանի մեծ դադափարը դուք, բոլշևիկներդ, վերականգնեցիք կամ թէ չէ դուք, համենայն դեպս, կվերականգնեք այն: Այս ամենը պատահականութիւն չէ: Պատահականութիւն չէ նաև այն, վոր այս դադափարը թափանցել է նույնիսկ մեր միջանի կուսակցական հիմնարկները: Յես ակնատես եյի այն բանին, թէ ինչպես փետրվարյան պլենումում, վորտեղ առաջին անգամ դրվում եր յերկրորդ պալատի հարցը, Կենտկոմի կազմում լսվում եյին կոմունիզմին չհամապատասխանող ճառեր,—ճառեր, վորոնք ընդհանուր վոչինչ չունեն ինտերնացիոնալիզմի հետ: Այս ամենը ժամանակի նշան է, համաճարակ է:

Այստեղից բղխող հիմնական վտանգը—դա այն վտանգն է, վորը բղխում է նրանից, թէ նեպի կապակցութեամբ վոչ թէ որեցոր, այլ ժամեժամ մեզանում աճում է մեծապետական շովինիզմը, ամենակարծրացած նացիոնալիզմը, վորը ջանում է ջնջել

1 Սմենովելսականութիւնը մի հոսանք է, վոր 1921 թ. ծագել է արտասահմանում սուսական սպիտակ-գվարդիական եմիգրացիայի մեջ առավելապես նրա ինտելիգենտական խավերում՝ Ն. Վ. Ուստրյալովի և այլոց գլխավորութեամբ, վորոնք հրատարակեցին «Смена вех» ժողովածուն և ավելի ուշ հրատարակում եյին նույն անունը կրող ժուռնալ: Նոր բուրժուազիան այն ժամանակ, նեպին անցնելիս, առաջադրեց իր «սմենովելսական դադափարախօսութիւնը, վորի եյութիւնն այն եր, թէ կոմունիստական կուսակցութիւնը պետք է վերաբերվի, իսկ նոր բուրժուազիան պետք է կոնսոլիդացիայի յենթաբովի, ըստվորում՝ մեզ համար աննկատելի կերպով, մենք, բոլշևիկներս, բանից դուրս է դալիս, պետք է մոտենանք դեմոկրատիկ հանրապետութեան շեմքին...» (Ստալին):

Կուսակցութիւնը մերկացրեց բուրժուական դադափարախօսութիւնը—սմենովելսականութիւնը:—Խմբ.:

բոլոր վոչ-ուսականը, կառավարման բոլոր թեկերը հավաքել ուս-  
սական սկզբունքի շուրջը և ճնշել վոչ-ուսականը: Հիմնական վը-  
տանդն այն է, վոր այսպիսի քաղաքականություն վարելով մենք  
ոխակ ենք անում կորցնելու նախկին ճնշված ժողովուրդների  
կողմից դեպի ուսսական պրոլետարները յեղած այն վտահու-  
թյունը, վոր նրանք ձեռք են բերել հոկտեմբերյան որերին, յերբ  
ուսս պրոլետարները տապալեցին կարվածատերերին, ուսս կա-  
պիտալիստներին, յերբ նրանք, ուսս պրոլետարները, խորտակե-  
ցին ազգային ճնշումը, դուրս հանեցին դորքերը Պարսկաստանից,  
Մոնղոլիայից, հոչակեցին Ֆինլանդիայի, Հայաստանի անկախու-  
թյունը և առհասարակ ազգային հարցը դրին միանգամայն նոր  
հիմքերի վրա: Այն վտահությունը, վոր մենք այն ժամանակ  
ձեռք բերինք, մենք կարող ենք կորցնել մինչև վերջին մնացորդ-  
ները, յեթե ամենք չզինվենք այդ նոր, կրկնում եմ, վելիքուս-  
սական շովինիզմի դեմ, վորը անձեռներն, անկերպարան սողում է  
կաթիլ առ կաթիլ ներծծվելով մեր աշխատողների ականջներն ու  
աչքերը, կաթիլ առ կաթիլ փոխելով նրանց վողին, ամբողջ հո-  
ղին՝ այնպես, վոր քիչ է մնում բոլորովին չճանաչես այդ աշ-  
խատողներին: Ահա այս վտանդն է, ընկերներ՛ր, վորի մեջքը մենք  
ինչ ել վոր լինի պետք և կտարենք, այլպպես՝ մեզ սպառնում է  
առաջներում ճնշված ժողովուրդների բանվորների ու գյուղացի-  
ների վտահությունը կորցնելու հեռանկարը, մեզ սպառնում է  
այդ ժողովուրդների և ուսսական պրոլետարիատի միջև յեղած  
կապի խզման հեռանկարը, և դրանով իսկ մեզ սպառնում է մեր  
դիկտատուրայի սխտեմում մի ինչ-վոր ձեղք թույլ տալու վը-  
տանդը: Չմոռանաք, ընկերներ՛ր, վոր յեթե մենք պարզված դրոշ-  
ներով կյինք զնսում կերենսկու դեմ և զցեցիք ժամանակավոր  
կառավարությունը, ապա, իմիջի ալոց, նրանից եր, վոր այն-  
տեղ թիկունքում մենք ունեյինք այն ճնշված ժողովուրդների  
վտահությունը, վորոնք աղատագրություն էյին ականկարում  
ուսս պրոլետարներից: Չմոռանաք այնպիսի ուղերվների մասին,  
ինչպես ճնշված ժողովուրդներն են, վորոնք լուռ են, բայց իրենց  
լուությամբ ճնշում ու վճուռ են շատ բան: Հաճախ այդ չի  
զգացվում, բայց նրանք, այդ ժողովուրդները, ապրում են, նը-  
բանք կան, և նրանց մասին մոռանալ չի կարելի: Այո՛, ընկեր-  
ներ՛ր, վտանգավոր է նրանց մասին մոռանալը: Չմոռանաք, վոր  
յեթե մենք Կոլչակի, Դենիկինի, Վրանդելի ու Յուդենիչի թի-  
կունքում չունենայինք այսպես կոչված «այլազգիներին», չու-  
նենայինք առաջներում ճնշված ժողովուրդներին, վորոնք դեպի

ուսս պրոլետարները տածած իրենց լուս համակրանքով քայքայում եյին այդ գեներալների թիկունքը,—ընկերներ՛ր, սա մի աւանձին գործոնն է մեր զարգացման մեջ,—լուս համակրանքը, այն վոչ վոք չի տեսնում ու չի լսում, բայց այն վճռում է ամեն ինչ,—յեթե այդ համակրանքը չլիներ՝ մենք այդ գեներալներից վոչ մեկին դեն չեյինք շարտի: Այն ժամանակ, յերբ մենք նրանց վրա եյինք դնում, նրանց թիկունքում սկսվեց փլուզումը: Ինչո՞ւ: Վորովհետև այդ գեներալները հենվում եյին կազակ-կոլոնիզատորական տարրերի վրա, նրանք ճնշված ժողովուրդների առաջ դժուր եյին վերջիններիս հետագա ճնշման հեռանկար, և ճնշված ժողովուրդներն ստիպված եյին մեր գիրկը դալ, մինչդեռ մենք պարզում եյինք այդ ճնշված ժողովուրդների ազատագրման դրոշը: Ահա թե ինչը վճռեց այդ գեներալների բախար, ահա այն գործոնների գումարը, վորոնց մեր դորբերի հաջողութուններն սովերի տակ են թողել, բայց վորոնք վերջին հաշիվով վճռել են ամեն ինչ: Այս չի կարելի մոռանալ: Ահա թե ինչու մենք պետք է կորուկ չըջադարձ կատարենք շովինիստական նոր տրամադրութունների դեմ պայքարելու իմաստով և անարդանքի սյունին դամենք մեր հիմնարկների այն պաշտոնյաներին և այն կուսակցական ընկերներին, վորոնք մոռանում են Հոկտեմբերին ունեցած մեր նվաճման մասին, այն է՝ առաջներում ճնշված ժողովուրդների վստահության մասին, վորը մենք պետք է թանգ դնահատենք:

Այս է առաջին և ամենալատանդալոր գործոնը, վորն արդեյակում է ժողովուրդների և հանրապետութունների իբրև միասնական միութուն միավորվելու դրոշը: Պետք է հասկանալ, վոր յեթե մի այնպիսի ուժ, ինչպիսին վելիկոուսական շովինիզմն է, փարթամորեն ծաղկի ու տարածվի,—առաջներում ճնշված ազգերի կողմից վոչ մի վստահութուն չի լինի, վոչ մի համադործակցութուն միասնական միության մեջ մենք չենք կառուցի և Հանրապետութունների վոչ մի Միութուն մենք չենք ունենա:

Յերկրորդ գործոնը, ընկերներ՛ր, վոր նույնպես արդելք է լինում առաջներում ճնշված ժողովուրդների միավորմանը ուսական պրոլետարիատի շուրջը, դա այն փաստական անհավասարութունն է, վոր մենք ցարիզմի շրջանից ենք ժառանգել:

Իրավական հավասարութուն մենք հռչակել ենք և կիրառում ենք, բայց իրավական հավասարութունից, վորն ըստինքյան մեծազույն նշանակութուն ունի խորհրդային հանրապետութունների դարգացման պատմության մեջ, մինչև փաստա-

Վան հավասարութիւնը, այնուամենայնիւ, հեռու յե: Մեր Ֆե-  
զերացիայի կազմի մեջ հետ մնացած բոլոր ազգութիւններն ու  
բոլոր ցեղերը Փորձալ կերպով նույնքան իրավունքներ ունեն,  
ինչքան և մյուս, առաջ անցած ազգութիւնները: Բայց դժբախ-  
տութիւնն այն է, վոր ազգութիւններից վոմանք չունեն իրենց  
պրոլետարները, արդյունաբերական զարգացում չեն ապրել,  
նույնիսկ չեն ել սկսել, կուլտուրապես սոսկալի հետ են մնացել  
և միանգամայն անզոր են ոգտագործելու այն իրավունքները,  
վոր նրանց ընձեռել է հեղափոխութիւնը: Այս, ընկերներ՝, ալեյի  
կարեւոր հարց է, քան դպրոցների հարցը: Այստեղ մեր ընկերնե-  
րից վոմանք կարծում են, վոր ցայտուն կերպով առաջին պլանի  
վրա դնելով դպրոցների ու լեզվի հարցը՝ չենց դրանով կարելի  
յե հանգուլցը կտրտել: Ճիշտ չէ, ընկերներ՝, այստեղ դպրոց-  
ներով շատ հեռուն չես դնա, դրանք, չենց այդ դպրոցները,  
զարգանում են, լեզուն նույնպես զարգանում է, բայց փաստացի  
անհավասարութիւնը, այս է բոլոր դժգոհութիւնների ու բաղ-  
խումների հիմքը: Այստեղ դպրոցներով ու լեզվով չես պրծնի,  
այստեղ հարկավոր է մեր իրական, սիստեմատիկ, անկեղծ, իս-  
կական պրոլետարական ողնութիւնը կուլտուրապես ու տնտեսա-  
պես հետամնաց ազգութիւնների աշխատավոր մասսաներին:  
Անհրաժեշտ է, վոր բացի դպրոցներից ու լեզվից, ուսաստա-  
նյան պրոլետարիատը ձեռք առնի բոլոր միջոցները, վորպեսզի  
ծայրամասերում, կուլտուրապես հետ մնացած հանրապետու-  
թիւններում, — իսկ նրանք իրենց մեղքով չէ, վոր հետ են մնա-  
ցել, այլ այն պատճառով, վոր առաջներում նրանց դիտում ելին  
իրբև հումքի աղբյուրներ, — անհրաժեշտ է հասնել այն բանին,  
վոր այդ հանրապետութիւններում արդյունաբերութեան ոջախ-  
ներ ստեղծվեն: Այս ուղղութեամբ միքանի փորձ արված է: Վը-  
րաստանը վերցրել է Մոսկվայից մի գործարան, և վերջինս,  
յերևի, մոտ ժամանակներս կսկսի բանել: Բուխարան վերցրել է  
մի գործարան, իսկ կարող եր չորս գործարան վերցնել: Թուր-  
քեստանը մի մեծ գործարան է վերցնում, և այսպիսով, բոլոր  
ավյալները կան, վոր տնտեսապես հետ մնացած և պրոլետա-  
րիատ չունեցող այդ հանրապետութիւնները ուս պրոլետարիա-  
տի ոգնութեամբ իրենց մոտ պետք է հիմնեն արդյունաբերութեան  
ոջախներ, թեկուզ փոքրիկ ոջախիկներ՝ նրա համար, վորպեսզի  
այդ ոջախիկներում լինեն տեղացի պրոլետարների խմբեր, վո-  
րոնք կարողանան ծառայել իբրև հաղորդակցութեան կամբջակ՝  
ուս պրոլետարներից ու գյուղացիներից դեպի այդ հանրապե-

տութեաններն աշխատավոր մասսաները: Ահա այս բնադափա-  
ռում հարկավոր է, վոր մենք լուրջ աշխատենք, և այստեղ միայն  
դպրոցներով ու լեզվով չեն պրծնի:

Բայց կա նաև մի յերրորդ դործոն, վորն արդելակում և  
հանրապետութեաններն միավորումը իբրև մի միութեան,— դա  
նացիոնալիզմն է առանձին հանրապետութեաններում: Նեպը ազ-  
դում է վոչ միայն ուս, այլև վոչ-ուս բնակչութեան վրա:  
Նեպը մասնավոր առևտուր ու արդյունաբերութեան է զարգաց-  
նում վոչ միայն Ռուսաստանի կենտրոնում, այլև առանձին հան-  
րապետութեաններում: Ահա հենց այս իսկ նեպը և նրա հետ  
կապած մասնավոր կապիտալը սնում, աճեցնում են վրացական,  
աբրեջանական, ուզբեկական և այլ նացիոնալիզմ: Հարկավ,  
յեթե չլիներ վելիկոուսական շովինիզմը, վորը հարձակողական  
է, վորովհետև այն ուժեղ է, վորովհետև այն առաջ ել ուժեղ է  
յեղել ու ճնշելու և նվաստացնելու նրա սովորքները մնացել են,—  
յեթե վելիկոուսական շովինիզմը չլիներ, ապա թերևս, տեղա-  
կան շովինիզմը իբրև պատասխան վելիկոուսականի, գոյութեան  
ունենար այսպես ասած՝ մինիմալ ու մինյատուր կերպով, վո-  
րովհետև, վերջին հաշիվով, հակառուսական նացիոնալիզմը  
պաշտպանողական ձև է, պաշտպանութեան մի վորոչ այլանդակ  
ձև է՝ ընդդեմ ուսական նացիոնալիզմի, ընդդեմ ուսական շո-  
վինիզմի: Յեթե այդ նացիոնալիզմը միայն պաշտպանողական  
լիներ, ելի կարելի կլիներ նրա պատճառով աղմուկ չբարձրաց-  
նել: Կարելի կլիներ դործողութեաններն ամբողջ ուժը և պայքա-  
րի ամբողջ ուժը կենտրոնացնել վելիկոուսական շովինիզմի  
դեմ՝ հույս ունենալով, թե հենց վոր տապալիի այս ուժեղ թըշ-  
նամին, ապա սրա հետ միասին կտապալիի նաև հակառուսական  
նացիոնալիզմը, վորովհետև նա, այդ նացիոնալիզմը, կրկնում  
եմ, վերջին հաշիվով ռեակցիա յե վելիկոուսական նացիոնալիզ-  
մի հանդեպ, պատասխան է նրան, վորոչ պաշտպանութեան է:  
Այո՛, սա այսպես կլիներ, յեթե տեղերում հակառուսական նա-  
ցիոնալիզմը ուսական նացիոնալիզմի հանդեպ ռեակցիա լինե-  
լուց դենը չզնար: Բայց դժբախտութեանն այն է, վոր միջանի  
հանրապետութեաններում պաշտպանողական այդ նացիոնալիզմը  
դառնում է հարձակողական:

Վերցնենք Վրաստանը: Այստեղ 30%-ից ավելի վոչ վրացա-  
կան բնակչութեան կա: Դրանց թվում են՝ հայերը, արխաղները,  
աջարացիները, ոսերը, թաթարները: Գլուխ են կանգնած վրա-  
ցիները: Վրացի կոմունիստների մի մասում ծնվել և զարգանում

ն մի դադարիար—չատ ել հաշվի չնստել այդ մանր ազգությունների հետ. նրանք պակաս կուլտուրական են, իբրև թե՛ պակաս զարգացած են, ուստի նրանց հետ կարելի չե հաշվի չնստել: Իսկ շովինիզմը ե—վնասակար ու վտանգավոր շովինիզմ, վորովհետև նա կարող է վրացական փոքրիկ հանրապետությունը վերածել խառնակչության ասպարեղի և նա արդեն իսկ խառնակչության այդպիսի ասպարեղ է դարձրել այն:

Ադրբեջանը: Հիմնական ազգությունը ադրբեջանականն է, բայց այնտեղ կան նաև հայեր: Ադրբեջանցիները մի մասի մեջ նույնպես կա այսպիսի, յերբեմն շատ ել չքողարկված, տենդենց այն նյութի մասին, թե մենք, գիտեք ինչ, ադրբեջանցիներ ենք, — բնիկներ, իսկ նրանք, հայերը, — յեկվորներ են: Քանի վոր այդպես է, արդյոք չի՞ կարելի նրանց մի քիչ հետ մղել, հաշվի չնստել նրանց շահերի հետ: Սա նույնպես շովինիզմ է: Սա խախտում է ազգությունների այն հավասարությունը, վորը հիման վրա կառուցվում է խորհրդային իշխանությունը:

Բուխարան: Այնտեղ, Բուխարայում, յերեք ազգություն կա. ուզբեկները—հիմնական ազգությունը, թուրքմենները՝ բուխարական շովինիզմի տեսակետով՝ «պակաս կարևոր» ազգություն, և կիբգիզները: Այնտեղ նրանք քիչ են, և նրանք «պակաս կարևոր են»: Սորեզմում նույն բանն է. թուրքմեններն ու ուզբեկները: Ուզբեկները հիմնական ազգությունն են, իսկ թուրքմենները՝ «պակաս կարևորը»:

Այս ամենը տանում է դեպի կոնֆլիկտներ, դեպի խորհրդային իշխանության թուլացումը: Այս հակումը դեպի տեղական շովինիզմը նույնպես պետք է արմատում խափանել: Իհարկե, տեղական շովինիզմը, համեմատած վերիկոռուսական շովինիզմի հետ, վորը ազգային հարցի ընդհանուր սխտեմում կազմում է ամբողջի յերեք քառորդը, այնքան կարևոր չէ, բայց տեղական աշխատանքի համար, տեղացիների համար, հենց ազգային հանրապետությունների խաղաղ զարգացման համար այս շովինիզմը առաջնակարգ նշանակություն ունի:

Այս շովինիզմը յերբեմն սկսում է յենթարկվել շատ հետաքրքրական ելուղուցիայի: Յես նկատի ունեմ Անդրկովկասը: Դուք դիտեք, վոր Անդրկովկասը բաղկացած է յերեք հանրապետություններից, վորոնք իրենց կազմում տասը ազգություն ունեն: Անդրկովկասը վաղ ժամանակներից հանդիսացել է կոտորածի ու խառնակչության ասպարեղ, իսկ հետո, մենչևիկների ու նացիոնալիստների որով՝ պատերազմի ասպարեղ: Դուք դի-

տեք վրացահայկական սրատերադմբ: 1904 թվականի սկզբի ու 1905 թվականի վերջի կոտորածը ձեզ նույնպես հայտնի յե: Յեւ կարող եմ մի շարք շրջանների անուններ տալ, վորտեղ մեծամասնութուն կազմող հայերը կոտորել են բնակչութան ամբողջ մնացած մասը, վոր բաղկացած է թաթարներէց, — որինսկ, Չանդեղուքը: Կա մի այնպիսի մարդ, վորտեղ մեծամասնութունը հայեր են, և այնտեղ նրանք կոտորել են բոլոր թաթարներին: Կարող եմ մատնանշել մի ուրիշ դավառ—Նախիջևանը: Այնտեղ գերակշռողը թաթարներն են յեղել, և նրանք կոտորել են բոլոր հայերին: Դա յեղել է իմպերիալիզմի լծից Հայաստանի ու Վրաստանի աղտաղբիվելուց հենց առաջ: (Մի ձայն տեղից. «Իրենց ձևով են լուծել աղբային Հարցը»): Իհարկէ այդ ել աղբային հարցի լուծման վորոչ ձև է: Բայց այդ՝ լուծման խորհրդային ձև չէ: Փոխադարձ աղբային թշնամանքի այս իրադրության մեջ, իհարկէ, ուսաները դեր չունեն, վորովհետև կոտորած են թաթարներն ու հայերը, առանց ուսաների: Ահա թե ինչո՞ւ Անդրկովկասում հարկայնոր է մի հատուկ մարմին, վորը կարողանար կարգավորել փոխհարաբերություններն ազդությունների միջև: Համարձակ կարելի յե ասել, վոր նախկին պետական Ռուսաստանի պրոլետարիատի և մնացած բոլոր ազդությունների աշխատավորների փոխհարաբերությունները կազմում են աղբային ամբողջ հարցի յերեք քառորդը: Բայց այս հարցի մի քառորդը պետք է բաժին թողնել իրենց, առաջներում ճնշված ազդությունների փոխհարաբերություններին:

Յեւ ահա՛ փոխադարձ անխտահության այս պայմաններում, յեթե վոր խորհրդային իշխանությունն Անդրկովկասում չկարողանար ստեղծել աղբային խաղաղության մի մարմին, վորը կարողանում է հարթել բաղխումներն ու կոնֆլիկտները, մենք կվերադառնայինք ցարիզմի դարաշրջանին կամ դաշնակների\*, մուսավաթականների\*, մենչևիկների դարաշրջանին, յերբ մարդիկ հրդեհում ու կոտորում եյին իրար: Ահա թե ինչու Կենսկումը յերիցս հաստատել է Անդրկովկասյան Ֆեդերացիայի՝ վորպես աղբային խաղաղության որդանի՝ պահպանության անհրաժեշտությունը:

Այստեղ յեղել է և մնում է վրացի—կոմունիստների մի խումբ, վորը չի առարկում այն բանի դեմ, վոր Վրաստանը միավորվի Հանրապետությունների Միության հետ, բայց առարկում է այն բանի դեմ, վոր այդ միավորումը տեղի ունենա Անդրկովկասյան

\* Տե՛ս զբոի վերջի 1 և 2 ծանոթագրությունները:

Ֆեդերացիայի միջոցով: Նրանք, դուք տեսնո՞ւմ եք, ուզում են Միութեանն ավելի մոտիկ լինել, թե իբր հարկաւոր չեն Անդրկովկասյան Ֆեդերացիայի ձևով այս միջնապատը մեր, վրացիներին ու Հանրապետութիւնների Միութեան միջև, թե իբր Ֆեդերացիան հարկաւոր չէ: Սա, կարծես թե, շատ հեղափոխականորեն ե հնչում: Բայց այստեղ ուրիշ դիտարկութիւն կա: Նախ, այդ հայտարարութիւնները խոսում են այն մասին, վոր վրաստանում ազգային հարցի բնագաւառում դեպի ուսաները յեղած վերաբերմունքը յերկրորդական նշանակութիւն ունի, վորովհետեւ այդ ընկեր-ուկլոնիստները (նրանց այսպես են անվանում) վոչինչ չունեն այն բանի դեմ, վոր վրաստանը Միութեան հետ միաւորվի ուղղակի, այսինքն՝ չեն վախենում վելիկոռուսական շովինիզմից՝ գտնելով, վոր նա այսպես թե այնպես տակից կարյաճ ե, կամ թե՛ մձոռդական նշանակութիւն չունի: Նրանք ակներև ե, ավելի վախենում են Անդրկովկասի Ֆեդերացիայից: Ինչո՞ւ: Ինչու պետք ե յերեք ժողովուրդներ, վոր ապրում են Անդրկովկասում, վոր այսքան ժամանակ կռվել են իրար դեմ, վոր կոտորել են միմյանց, վոր պատերազմել են միմյանց դեմ, — ինչո՞ւ պետք ե այդ ժողովուրդները այժմ, յերբ, վերջապես, խորհրդային իշխանութիւնը նրանց միջև յեղբայրական միութեան կապեր ե հաստատել Ֆեդերացիայի ձևով, յերբ այդ Ֆեդերացիան տվել ե փոխադարձ յեղբայրութեան իսկական արգասիքներ, ինչո՞ւ այժմ պետք ե կարել Ֆեդերացիայի այդ կապերը: Ինչո՞ւմն ե բանը, ընկերներ: Բանն այն ե, ընկերներ, վոր Անդրկովկասի Ֆեդերացիայի կապերը զրկում են վրաստանին արտոնյալ դրութեան այն բաժնից, վորը նա կարող եր դրամել իր աշխարհադրական դիրքով: Դատեցեք ինքներդ: վրաստանն ունի իր նախահանգիստը—Բաթումը, վորի վրայով են դալիս ապրանքներն Արևմուտքից, վրաստանը ունի մի այնպիսի յերկաթուղային հանգույց, ինչպիսին Թիֆլիսն ե, վորին չեն կարող մի կողմ թողնել հայերը, չի կարող մի կողմ թողնել Ադրբեջանը, վորն իր ապրանքները Բաթումից ե ստանում: Յեթե վրաստանը առանձին հանրապետութիւն լիներ, յեթե նա չմաներ Անդրկովկասյան Ֆեդերացիայի մեջ, նա կարող եր մի փոքրիկ ուլտիմատում ներկայացնել թե Հայաստանին, վորը չի կարող առանց Թիֆլիսի կառավարվել, ե թե Ադրբեջանին, վորն առանց Բաթումի չի կարող յուր գնալ: Այստեղ վորոշ ոգուտներ կլինէյին: Սա պատահականութիւն չե, ընկերներ, վոր մի այսպիսի վայրենի դեկրետ կորզոնի մասին հենց վրաստանումն ե մշակվում:

Այժմ այդ մեղքը Սերեբրյակովի վրա յեն գցում: Գիցուք թե այդպես եր: Բայց չե՞ վոր նա Վրաստանում և ծնվել և վոչ թե Աղբբեջանում ու վոչ էլ Հայաստանում: Սա պատահականություն չէ, վոր յեղել է մի այսպիսի դեկրետ, վորով ուղեցել են կարգավորել ընակչության ազգային խմբերի միջև յեղած հարաբերությունները նրա համար, վորպեսզի մի բան պահեն հոգուտ Վրաստանի և Վրաստանին հնարավորություն տան ողտազործելու այն նպատավոր աշխարհազրահան դերքը, վորը նա անպաքման ունի և վորը հանձինս ուկրոնիստների նա չի ուզում կորցնել: Այնուհետև, այստեղ մի ուրիշ պատճառ էլ կա: Թիֆլիսը Վրաստանի մայրաքաղաքն է, բայց այնտեղ վրացիները 25%-ից ավելին չեն, հայերը 35%-ից պակաս չեն, այնուհետև գայիս են բոլոր մնացած ազգությունները: Այս էլ ձեզ Վրաստանի մայրաքաղաք: Թե վոր Վրաստանն առանձին հանրապետություն լիներ, ապա այստեղ կարելի յեր կատարել ընակչության վորոշ տեղափոխություն, որինակ, հայ ընակչության տեղափոխություն Թիֆլիսից: Յեղել է հո մի այդպիսի դեկրետ, վորի մասին ընկ. Մախարաձեն հայտնեց, թե այն ուղղված է յեղել հայերի դեմ: Կարելի յեր վորոշ տեղափոխություն կատարել այնպես, վոր հայեր տարեցտարի Թիֆլիսում ավելի քիչ լինեյին, քան վրացիներ, և այսպիսով, Թիֆլիսը դարձնել իսկական վրացական մայրաքաղաք: Յես յենթադրում եմ, վոր տեղահանության դեկրետը նրանք վերացրել են: Բայց նրանց ձեռքում բազմաթիվ հնարավորություններ, բազմաթիվ այնպիսի ճկուն ձևեր կան, — որինակ, «բեռնաթափումը», — վորոնց միջոցով կարելի էլիներ, պահպանելով ինտերնացիոնալիզմի տեսքը, բանն այնպես սարքել, վոր Թիֆլիսում հայեր պակաս լինեն: Աշխարհազրահան դերքի ահա այս ողուտները, վոր չեն ուզում կորցնել ուկրոնիստները, և վրացիները աննպատա դերքը բուն Թիֆլիսում, վորտեղ վրացիներ ավելի քիչ կան, քան հայեր, — հենց սրանք են ստիպում մեր ուկրոնիստներին պայքարել Ֆեդերացիայի դեմ: Մենչեիկները հայերին ու թաթարներին ուղղակի Թիֆլիսից տեղահանում եյին: Իսկ այժմ, խորհրդային իշխանության օրով, տեղահանել չի կարելի, ուստի և պետք է անջատվել Ֆեդերացիայից, և այն ժամանակ իրավական հնարավորություններ կլինեն, վորպեսզի ինքուրույնորեն այնպիսի ուղեբացիաներ կատարեն, վորոնք կհանդգնեն այն բանին, վոր վրացիների նպատատվոր դերքը լիովին կոգտազործվի Աղբբեջանի ու Հայաստանի դեմ: Յեզ այս ամենի հետևանքով կստեղծվեր վրացիների արտոնյալ

դրություն Անդրկովկասի ներսում : Այս և ամբողջ մտանդը : Արդ-  
դյոք մենք կարո՞ղ ենք, անտեսելով ազգային խաղաղության շա-  
հերն Անդրկովկասում, արդյոք մենք կարո՞ղ ենք ստեղծել այն-  
պիսի պայմաններ, վոր վրացիները զանվեյին արտոնյալ դրու-  
թյան մեջ Հայաստանի և Աղբրեջանի հանրապետությունների  
հանդեպ : Վո՞չ : Մենք այդ բանը թույլ տալ չենք կարող :

Կառավարման մի հին հատուկ սխտեմ կա, յերբ բուրժուա-  
կան իշխանությունը մոտեցնում է իրեն միքանի ազգություն,  
նրանց արտոնություններ է տալիս, իսկ մնացած ազգություններին  
նվաստացնում ե՛՛ չկամենալով զբաղվել նրանցով : Այսպիսով,  
իրեն մոտեցնելով մի ազգություն՝ նա սրա միջոցով ճնշում է  
զործ դնում մնացածների վրա : Այսպես էյին կառավարում, որի-  
նակ, Ալստրիայում : Բոլորի հիշողության մեջ է ավստրիական  
մինիստր Բեյտտի հայտարարությունը, յերբ նա կանչեց հունդա-  
րական մինիստրին ու ասաց, «դու կառավարիր քո հորդաները,  
իսկ յես իմ հորդաներից գլուխ կլծախեմ . դա ասել կուզի՞՝ հուպ  
տուր ու ճգմի՛ր Հունդարիայում քո ազգություններին, իսկ յես  
կճղմեմ իմ ազգություններին : Դու և յես՝ արտոնյալ ազգեր ենք,  
իսկ մնացածներին ճղմի՛ր : Նույն այս բանը տեղի յեր ունենում  
լեհերի վերաբերմամբ բուն Ալստրիայի ներսում : Ալստրիացիներ-  
ըր լեհերին իրենց մոտեցրին, նրանց արտոնություններ էյին տա-  
լիս, վորպեսպի լեհերը ավստրիացիներին ողնեն՝ սրանց դիրքերը  
լեհաստանում ամբացնելու համար, իսկ սրա փոխարեն լեհերին  
հնարավորություն էյին տալիս Գալիցիան խեղդելու : Սա մի ա-  
ռանձին դուռ ավստրիական սխտեմ է—գատել ազգություններից  
վոմանց ու նրանց արտոնություններ տալ, վորպեսպի այնուհետ  
մնացածների հախից դան : Բյուրոկրատիայի տեսակետից՝ սա կա-  
ռավարման խնայողական ձև է, վորովհետև հարկ է լինում զբաղ-  
վել մի ազգությամբ, բայց քաղաքական տեսակետից, դա ան-  
խուսապիելի մահ է, վորովհետև խախտել ազգությունների հա-  
վասարության սկզբունքները և վորևե արտոնություն թույլ տալ  
մի ազգության համար՝ դա նշանակում է մահվան դատապարտել  
իր ազգային քաղաքականությունը :

Հենց նույն կերպ էլ այժմ Անգլիան է կառավարում Հնդկաս-  
տանը : Վորպեսպի բյուրոկրատիայի տեսակետից ավելի հեշտու-  
թյամբ գլուխ լծախեն Հնդկաստանի ազգություններից ու ցեղե-  
րից, Անգլիան Հնդկաստանը բաժանել է Բրիտանական Հնդկաս-  
տանի (240,000,000 բնակչություն) ու բնիկների Հնդկաստանի  
(72,000,000) : Ի՞նչ հիման վրա : Հենց այն հիման վրա, վոր Ան-

դիլիան ցանկացել և ազգերի մի խումբը զատել ու նրան արտոնութ-  
յուններ տալ, վորպեսզի դրանով իսկ ավելի հարմար կերպով  
կառավարի մյուս ազգությունները: Բուն Հնդկաստանում ազգու-  
թյունները 800-ից պակաս չեն, և Անգլիան վճռել է՝ փոխանակ  
յես գրադվեմ 800 առանձին ազգություններով, ավելի լավ և դա-  
տել միքանի ազգ, տալ նրանց վորոչ արտոնություններ և նրանց  
միջոցով կառավարել մյուսներին, վորովհետև, նախ, մնացած  
ազգերի դժգոհությունն այդ դեպքում ուղղվելու չե այս արտո-  
նյալների, և վոչ թե Անգլիայի դեմ, իսկ յերկրորդը, յերկու-  
յերեք ազգով «գրադվելը» ավելի եժան կնտի, քան 800-ով  
«գրադվելը»:

Սա նույնպես կառավարման սխտեմիկ է, անգլիական սխտե-  
միկ: Դա ի՞նչ բանի չե հանդեցնում: Ապարատի եժանացման,—  
այս ճիշտ է: Բայց, ընկերներ, յեթե վերանանք բյուրոկրատական  
հարմարություններից, ապա այս՝ անգլիական տիրապետության  
մասն և Հնդկաստանում, այստեղ, այս սխտեմումն և անգլիա-  
կան կառավարման ու անգլիական տիրակալության ամբողջ սխ-  
տեմի անխուսափելի, ինչպես յերկու անգամ յերկու չորս՝  
մահը:

Մեզ դեպի այս վտանգավոր ճանապարհն են մղում մեր ըն-  
կեր վրացի-ուկրոնիստները, վորքան վոր նրանք պայքարում են  
Ֆեդերացիայի դեմ, խախտելով կուսակցության բոլոր որենքնե-  
րը, վորքան վոր նրանք ուզում են դատվել Ֆեդերացիայից, վոր-  
պեսզի պահեն իրենց նպաստավոր դիրքը: Նրանք մեզ մղում են  
դեպի մի ուղի՝ վորոչ արտոնություններ ընձեռելու իրենց՝ ի  
հաշիվ Հայաստանի ու Ադրբեջանի հանրապետությունների: Մենք  
այս ճանապարհը չենք կարող ընտրել, վորովհետև սա հաստա-  
տապես մահ է մեր ամբողջ քաղաքականության ու խորհրդային  
ըշխանության համար Կովկասում:

Պատահականություն չե, վոր այս վտանգը զգացին մեր ըն-  
կերները Վրաստանում: Հարձակման անցած վրացական այս շովի-  
նիզմը, վոր ուղղված էր հայերի ու ադրբեջանցիների դեմ, վորդո-  
վեց Վրաստանի կոմկուսին: Պատահականություն չե, վոր Վրաս-  
տանի կոմկուսը, վորը իր լեզալ դոյության որից սկսած յերկու  
համագումար և ունեցել, ամեն անգամ միահամուռ մերժել և ըն-  
կեր-ուկրոնիստների դիրքը, վորովհետև առանց Անգրիկովկասյան  
Ֆեդերացիայի չի կարելի խաղաղություն պահել Կովկասում,  
չի կարելի հալասարություն հաստատել: Չի կարելի թույլ տալ,  
վոր մի ազգություն ավելի արտոնյալ լինի, քան մյուսը: Այս բա-

նը մեր ընկերներն զգացին: Ահա թե ինչու պայքարի յերկու տա-  
րում Մախվանու խումբը ներկայացնում և մի փոքրիկ խմբակ,  
վորին մի գլուխ դուրս և շարտում կուսակցությունը հենց  
վրաստանում:

Պատահականութուն չե նաև այն, վոր ընկ. Լենինը այնպես  
շտապում էր և այնպես խթանում էր, վորպեսզի Ֆեդերացիան  
անհապաղ մտցվի: Պատահական չե նաև այն, վոր մեր Կենտկոմը  
յերիցս հաստատել և Ֆեդերացիայի անհրաժեշտությունն Անդր-  
կովկասում, — Ֆեդերացիա, վորն ունի իր ԿԳԿ և իր դործադիր  
իշխանությունը, վորի վճիռները պարտադիր են հանրապետու-  
թյունների համար: Պատահական չե և այն, վոր յերկու հանձնա-  
ժողովն ել — թե ընկ. Չերժինսկունը և թե ընկ. Կամենսկինը՝  
Կուլյիշեվի հետ միասին, — գալով Մոսկվա՝ ասացին, վոր չի  
կարելի յուր գնալ առանց Ֆեդերացիայի:

Պատահական չե, վերջապես, նաև այն, վոր «Սոցիալիստի-  
չեսկի Վեստնիկ» մենչևիկները դովում են մեր ընկեր-ուկլոնիստ-  
ներին Ֆեդերացիայի դեմ պայքարելու համար, ձեռքերի վրա յեն  
ման ածում նրանց. ձկնորսը ձկնորսին հեռվից և տեսնում:

Անցնում եմ, ընկերներ, այն միջոցների, այն յեղանակների  
քննարկմանը, վորոնց ողնությամբ անհրաժեշտ և, վոր մենք հաղ-  
թահարենք միավորումը արգելակող այս յերեք հիմնական դոր-  
ժոնները՝ վելիկոուսական շովինիզմը, փաստական անհավա-  
սարությունը և տեղական նացիոնալիզմը մտնալանդ այն գեպ-  
քում, յերբ այն շովինիզմի յե փոխարկվում: Այն միջոցներից, վոր-  
ոնք կարող են ողնել մեզ՝ անհիմանդադին կերպով վերացնելու  
այս ամբողջ ժառանգությունը, հին ժառանգությունը, վորն ար-  
գելակում և ժողովուրդների մերձեցումը, յես կնշեմ միայն յերե-  
քը:

Առաջին միջոցը. ձեռք առնել բոլոր միջոցներն այն բանի հա-  
մար, վորպեսզի խորհրդային իշխանությունը հանրապետություն-  
ներում հասկանալի ու հարազատ դառնա, վորպեսզի խորհրդա-  
յին իշխանությունը մեղանում լինի վոչ միայն ուսսական, այլև  
միջազգյան: Սրա համար անհրաժեշտ և, վոր վոչ միայն դպրոց-  
ները, այլև բոլոր հիմնարկները, բոլոր մարմինները, ինչպես  
կուսակցական, այնպես ել խորհրդային՝ քայլ առ քայլ ազգայնա-  
նան, վոր նրանք դորձեն մասսաների համար հաղկանալի լեզվով,  
վոր նրանք դորձեն տվյալ ժողովրդի կենցաղին համապատաս-  
խանող պայմաններում: Միայն այս պայմանով և, վոր մենք  
հնարավորութուն կստանանք խորհրդային իշխանությունը դարձ-

նելու ուսականից՝ միջադրան, մոտ, հասկանալի ու հարազատ բոլոր հանրապետութիւնների և առանձնապես այն հանրապետութիւնների աշխատավոր մասսաների համար, վորոնք հետ են մնացել տնտեսապես ու կուլտուրապես:

Յերկրորդ միջոցը, վորը կարող է հեշտացնել ցարիզմից ու բուրժուազիայից ստացված ժառանգութիւնը անհիման դաշին կերպով վերացնելու մեր դործը, դա կոմիսարիատների մի այնպիսի կառուցվածքն է Հանրապետութիւնների Միութեան մեջ, վորը դոնե հիմնական ազգութիւններին հնարավորութիւն տար կոլեկիաների կազմում ունենալու իրենց մարդիկը և վորը ստեղծեր մի այնպիսի իրազրութիւն, յերբ առանձին հանրապետութիւնների կարիքներն ու պահանջները անսպասան բավարարվին:

Յերրորդ միջոցը. անհրաժեշտ է, վոր մեր բարձրագույն մարմինների կազմում լինի մի այնպիսի մարմին, վորը հանդիսանար առանց բացառութեան բոլոր հանրապետութիւնների և ազգութիւնների կարիքների ու պահանջների արտացոլումը: Յետ ուզում եմ այս վերջինիս վրա հատկապես հրավիրեյ ձեր ուշադրութիւնը:

Յեթն վոր մենք կարողանայինք միութենական կոյն կազմում հիմնել յերկու պալատ, վորոնցից առաջինն ընտրվեր խորհուրդների միութենական համադրումարում՝ անկախ ազգութիւններից, իսկ յերկրորդ պալատն ընտրվեր հանրապետութիւնների ու մարդերի կողմից (հանրապետութիւնները հալասարարար և ազգային մարդերը նույնպես հալասարարար) և հաստատվեր Հանրապետութիւնների Միութեան խորհուրդների նույն համադրմարի կողմից, յես կարծում եմ, վոր այն ժամանակ մեր դերագույն հիմնարկների կազմում մենք կունենայինք նաև դուռ ազգային պահանջների արտացոլումը և վոչ թե միայն առանց բացառութեան բոլոր պրոլետարական խմբերի դասակարգային շահերի արտացոլումը: Մենք կունենայինք մի մարմին, վորը կարտացոլեր Հանրապետութիւնների Միութեան տերիտորիայի վրա բնակվող ազգութիւնների, ժողովուրդների ու ցեղերի հասուկ շահերը: Զի կարելի, ընկերներ՝, մեր պայմաններում, յերբ Միութիւնն ընդհանուր առմամբ միավորում է 140 միլիոն մարդ, վորոնցից մի 65 միլիոնը վոչ-ուսներ են, — այս տեսակի մի պետութեան մեջ չի կարելի կառավարել՝ այստեղ, Մոսկվայում, բարձրագույն մարմնում, մեր առջև չունենալով այդ ազգութիւնների պատմիւրակներին, վորոնք արտացոլեցին վոչ միայն ամբողջ

պրոչեաորիաաի համար ընդհանուր շահերը, այլև առանձին, հատուկ, պեցիֆիկ, ազգային շահերը: Առանց սրան, ընկերնե՛ր, չի կարելի կառավարել: Չունենալով ձեռքում այս բարոմետրը և այնպիսի մարդկանց, վորոնք ընդունակ են ձեռքերսպելու առանձին ազգութիւնների այս հատուկ կարիքները՝ չի կարելի հառավարել:

Յերկիր կառավարելու յերկու յեղանակ կա. մի յեղանակն այն է, յերբ ապարատը պարզացված է և այն դիտափորում է, ասե՛նք, մի խումբ կամ մի մարդ, վորը տեղերում ձեռքեր ու աչքեր ունի՝ նահանգապետների ձեռով: Սա կառավարման շատ պարզ ձև է, ըստ՝սրում՝ գլուխը, կառավարելով յերկիրը՝ այն տեղեկութիւններն է ստանում, վոր կարող են ստացվել նահանգապետներից, և դրուխն իրեն միխիթարում է այն հուշումով, նոր նա աղքատացար և ճիշտ է կառավարում: Հետո բաղխումներ են ծագում, բաղխումները փոխարկվում են կոնֆլիկտների, կոնֆլիկտները՝ ապրտամբութիւնների: Հետո ապտամբութիւնները ճնշվում են: Կառավարման այսպիսի սխտեմը մեր սխտեմը չէ, ի դեպ, այն չաիազանց թանդ է, թեպետև, պարզ է: Խորհրդային յերկրում մենք պետք է յուրացնենք կառավարման այն սխտեմը, վորը հնարափորութիւն է տալիս ճշտությամբ կռահելու բոլոր փոփոխութիւնները, բոլոր հանգամանքները՝ թե՛ դյուրացիների մեջ, թե՛ նացիոնալների մեջ, թե՛ այսպես կոչված այլազգիների մեջ, թե՛ ուսաների մեջ, վորպեսզի բարձրագույն որդանների սխտեմում լինեն մի շարք բարոմետրներ, վորոնք կռահեն ամեն մի փոփոխութիւն, հաշի առնեն ու կանխեն թե բասմաչական շարժումը, թե բանդիտականը, թե կրոնչտադատը, թե ամեն մի հնարափոր փոթորիկ ու ձախորդութիւններ: Սա կառավարման խորհրդային սխտեմն է: Նա այն պատճառով է կոչվում խորհրդային իշխանութիւն, ժողովրդական իշխանութիւն, վոր հենվելով բուն ներքնախալերի վրա՝ նա բոլորից շուտ է գղում ամեն մի փոփոխութիւն, համապատասխան միջոցներ է ձեռք առնում և ժամանակին է շտկում գիծը, յեթե այն ծուլել է,—ինքն է իրեն քննադատում ու շտկում է գիծը: Կառավարման այս սխտեմը խորհրդային սխտեմն է, և այն պահանջում է, վորպեսզի բարձրագույն մարմինների սխտեմում մենք ունենանք մարմիններ, վորոնք առանց մնացորդի արտացոլեն ազգային կարիքներն ու պահանջները:

Առարկութիւն կա, թե այդ կրարդացնի կառավարման ամբողջ սխտեմը, թե դա նոր մարմիններ կկուտաի իրար դիսի:

Այդ ճիշտ է: Մինչև այժմ մենք ունեյինք ՌՍՖՖՀ ԿԳԿ, ապա ստեղծեցինք Միութեան ԿԳԿ, այժմ, յերևի, հարկ կլինի Միութեան ԿԳԿ բաժանել յերկու մասի: Ինչ արած: Յես մատնանչեցի, վոր կառավարման ամենապարզ ձևն է՝ մեկին դործի գլուխ նստեցնել և նրան նահանգապետներ տալ, բայց Հոկտեմբերից հետո արդեն չի կարելի զբաղվել այդպիսի եքսպերիմենտներով: Միտեմը բարդացել է, բայց այն հեշտացնում է կառավարումը և ամբողջ կառավարումը խորապես խորհրդային և դարձնում: Ահա թե ինչու յես կարծում եմ, վոր համադրումարը պետք է ընդունի հատուկ մարմնի, Միութեան ԿԳԿ-ի կազմում յերկրորդ պալատի, վորպես բացարձակապես անհրաժեշտ մի մարմնի, հիմնադրումը:

Յես չեմ ասի, թե սա Միութեան Ժողովուրդների միջև համադրեմակցութունը կարգավորելու կատարյալ ձև է, չեմ ասի, թե սա դիտութեան վերջին խոսքն է, բնավ ել վոչ: Ազգային հարցը մենք տակավին հաճախ ենք դնելու, վորովհետև ազգային ու միջազգային պայմանները փոփոխվում են և ելի կարող են փոխվել: Յես չեմ հրաժարվում այն բանից, վոր գուցե մենք հարկադրված լինենք միջանի կոմիսարիատներ, վոր մենք միաձուլում ենք Հանրապետութեանների Միութեան կազմի մեջ, հետո անջատել, յեթե փորձը ցույց տա, վոր կոմիսարիատներից վոմանք, միաձուլվելով, մինուս են տվել:

Բայց մի բան պարզ է, — վոր տվյալ պայմաններում ու տվյալ իրադրութեան մեջ մեր տրամադրութեան տակ ավելի լավ մեթոդ և ուրիշ, ավելի հարմար մարմին չկա: Հանրապետութեան առանձին մասերի ներսում յեղող տատանումներն ու բոլոր փոփոխութեաններն արտացոլել կարողացող մարմին ստեղծելու համար ավելի լավ միջոցներ և այլ ճանապարհ, քան յերկրորդ պալատի հիմնումն է՝ մենք առայժմ չունենք: Ըստինքյան հասկանալի յես, վոր յերկրորդ պալատում պետք է ներկայացվեն վոչ միայն այս չորս հանրապետութեանը, վորոնք միավորվել են, այլ բոլոր Ժողովուրդները, վորովհետև խոսքը վոչ միայն այն հանրապետութեանների մասին է, վորոնք ձևականորեն միավորվել են (նրանք չորսն են), այլև բոլոր Ժողովուրդների ու ազգութեանների մասին է: Ուստի մեզ անհրաժեշտ է ունենալ մի այնպիսի ձև, վորը կարողանար տալ առանց բացառութեան բոլոր Ժողովուրդների ու հանրապետութեանների պահանջների արտացոլումը:

Յես ամփոփում եմ, ընկերներ: Ուրեմն ազգային հարցի կա-

ընկույթ յունը վորոշվում է նոր սխոռուցիայով միջադգային դրուժյան մեջ, նրանով, վոր մենք աշատեղ, Ռուսաստանում, մեր Ֆեդերացիայում, պետք է ազգային հարցը լուծենք ճիշտ, որինակելի ձևով, վորպեսզի որինակ տանք մեր հեղափոխության ծանր ոեղբրվները հանդիսացող Արևելքին և դրանով իսկ ուժեղացնենք այդ ոեղբրվների վստահությունը, հակումը դեպի մեր Ֆեդերացիան: Ներքին դրության տեսակետից՝ նեպի պայմանները, ուժեղացող վելիկոուսական շովինիզմը և տեղական շովինիզմը նույնպես մեղ պարտադրում են ընդգծելու ազգային հարցի առանձին կարևորությունը:

Այնուհետև յես ասացի, վոր ազգային հարցի ելությունը՝ դա ճիշտ հարաբերությունների սահմանումն է՝ նախկին պետական ազգի պրոլետարիատի և նախկին վաշ-պետական ազգերի դշուղացիության միջև, վոր այս տեսակետից՝ ավյալ մոմենտում ազգային հարցի կոնկրետ ձևն արտահայտվում է նրանով, վոր ուղիներ դանենք, միջոցներ դանենք ժողովուրդների համագործակցությունը և համակեցությունը Հանրապետությունների Միության մեջ, միասնական պետության մեջ, հարգարելու համար:

Այնուհետև յես խոսեցի այն դործոնների մասին, վորոնք նպաստում են ժողովուրդների այդպիսի մերձեցմանը. յես խոսեցի այն դործոնների մասին, վորոնք արգելակում են այդպիսի միավորումը: Յես հատկապես կանգ առա վելիկոուսական շովինիզմի, վորպես ամրապնդվող ուժի վրա: Այդ ուժն այն հիմնական վտանգն է, վորը կարող է խախտել առաջներում ճշված ժողովուրդների վստահությունը դեպի ուս պրոլետարիատը: Դա՝ մեր ամենավտանգավոր թշնամին է, վորին մենք պետք է տապալենք, վորովհետև, յեթե մենք նրան տապալենք, ապա <sup>9</sup> 10-ով տապալած կլինենք նաև այն նացիոնալիզմը, վորը պահպանվել է և վորը զարգանում է առանձին հանրապետություններում:

Ապա: Մենք կանգնած ենք այն վտանգի առջև, վոր ընկերների միջանի խմբեր մեղ կարող են մղել ազգություններից վորմանց ի վնաս մյուսների արտոնություններ ընձեռելու ճանապարհը: Յես հայտարարեցի, վոր մենք այդ ճանապարհը բռնել ենք կարող, վորովհետև դա տեղական նացիոնալիզմի զարգացումն է ամենաայլանդակ, ամենաշովինիստական ձևով, վորովհետև այն կարող է խախտել ազգային խաղաղությունը և սպանել այլազգի մասսաների վստահությունը դեպի խորհրդային իշխանությունը:

Այնուհետև, յես ասացի, թե այն հիմնական միջոցը, վորը

մեզ կարող ե հնարավորութիւն տալ ամենամահիւմանդակն կերպով վերացնելու միախորմանը խանդարող այդ գործոնները, դա յերկրորդ պալատն ե ԿԳԿ կաղմում, —մի պալատ, վորի մասին ավելի բացահայտորեն յես խոսել եմ Կենտկումի վերաբարյան պլենումում ե վորի մասին թեղիսներում ավելի սքողված ձևով ե խոսվում, վորպեսզի հնարավորութիւն տրվի ընկերներին մի գուցե նշելու, գտնելու մի ուրիշ, ավելի ձկուն ձև, մի ուրիշ, ավելի հարմար մարմին, վորը կարողանա արտացոլել ազգութիւնների շահերը: Սրանք են յեզրակացութիւնները:

Յեռ կարծում եմ, վոր միայն այս ճանապարհը բռնելով մենք կհասնենք ազգային հարցի ճիշտ լուծմանը, մենք կհասնենք այն բանին, վոր լայնորեն կպարզենք պրոլետարական հեղափոխութեան դրոշը ե նրա շուրջը կհավաքենք Արևելքի յերկիրների համախրանքն ու վստահութիւնը, —Արևելքի, վորը ներկայացնում ե մեր հեղափոխութեան ծանր ռեզերվները ե կարող ե վճռողական դեր խաղալ իմպերիալիզմի դեմ պրոլետարիատի մղելիք ապագա մարտերում: (Ծափահարութիւններ):

## ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔ

Ընկերներ: Նախքան ազգային հարցի սեկցիայի աշխատանքների մասին հաղորդում անելուն անցնելը՝ ինձ թույլ տվեք առարկութիւն անելու այն հետոքներին, վորոնք արտահայտվեցին իմ դեկուցման շուրջը, յերկու հիմնական կետի վերաբերմամբ: Սա ընդամենը մօտ 20 բուպե կխլի, վոչ ավելի:

Առաջին հարցը՝ դա այն հարցն ե, վոր մի խումբ ընկերներ, Բուխարինի ու Ռահովսիու գլխավորութեամբ, չափազանց ուռեցրին ազգային հարցի նշանակութիւնը, չափազանցրին այն ե ազգային հարցի պատճառով աչքաթող արին սոցիալական հարցը, —բանվոր դասակարգի իշխանութեան հարցը:

Մինչդեռ մեզ համար, վորպես կոմունիստների համար, պարզ ե, վոր մեր ամբողջ աշխատանքի հիմքը բանվորների իշխանութիւնն ամբողջովեւ աշխատանքն ե, ե միայն սրանից հետո յե, վոր մեր առջև ծառանում ե մյուս հարցը, շատ կարևոր, բայց առաջինին ստորագիր մի հարց—ազգային հարցը: Մեզ ստում են, թե չի կարելի նեղացնել նացիոնալներին: Այդ միանգամայն ճիշտ ե, յես համաձայն եմ դրա հետ, —հարկավոր չե նեղացնել նրանց: Բայց սրանից ստեղծել մի նոր թեորիա այն մասին, թե վելիկոնուսական պրոլետարիատը պետք ե դնել անխրավահավասար վի-

ճակի մեջ նախկին ճնշված ազգերի հանդեպ՝ սա նշանակում է անպատեհ բան ասել: Այն, ինչ ընկ. Լենինի մոտ խոսքի դարձվածք է նրա հոգիվածում, ընկ. Բուխարինը մի ամբողջ լոգոսեզի վերածեց: Մինչդեռ, պարզ է, վոր պրոլետարական զիկտատուրայի քաղաքական հիմքն ամենից առաջ և գլխավորապես կենտրոնական շրջաններն են, արդյունաբերական շրջանները, և վոր թե ծայրամասերը, վորոնք գյուղացիական յերկիրներ են: Յեթե վոր մենք չափազանցության մեջ ընկնելով՝ գերակշռություն տանք գյուղացիական ծայրամասերին ի վնաս պրոլետարական շրջանների, ապա պրոլետարիատի զիկտատուրայի սխտեմում կարող է ճեղք առաջ գալ: Սա, ընկերներ՛ր, վտանգավոր է: Քաղաքականության մեջ չի կարելի գերադել ճիշտ այնպես, ինչպես վոր չի կարելի և թերադել:

Հարկավոր է հիշել, վոր բացի ազգերի ինքնորոշման իրավունքից՝ կա նաև բանվոր դասակարգի իր իշխանությունը ամրապնդելու իրավունքը, և այս վերջին իրավունքին իրավունքին յենթակա յե ինքնորոշման իրավունքը: Դեպքեր են յինում, յերբ ինքնորոշման իրավունքը հակասության մեջ է մտնում մի ուրիշ, ավելի բարձր իրավունքի հետ, — իշխանություն նվաճած բանվոր դասակարգի կողմից իր իշխանությունն ամրապնդելու իրավունքի հետ: Այսպիսի դեպքերում, — այս ուղղակի պետք է ասել, — ինքնորոշման իրավունքը չի կարող և չպետք է խոչընդոտ հանդիսանա բանվոր դասակարգի կողմից իր զիկտատուրայի իրավունքն իրականացնելու դործին: Առաջինը պետք է տեղի տա յերկրորդի առաջ: Այսպես եր, որինակ, 1920 թվականին, յերբ մենք հարկադրված էինք, նկատի ունենալով բանվոր դասակարգի իշխանությունը պաշտպանելու շահը, գնալ Վարչավայի վրա:

Աւստի՝ չպետք է մոռանալ, վոր նացիոնալներին ամեն տեսակի խոստումներ բաժանելով, պատվի բռնելով ազգությունների ներկայացուցիչների առջև, ինչպես այդ անում է յին ընկերներից վրամանք այս համազուգարում, հարկավոր է հիշել, վոր ազգային հարցի ներդրոծության վոլորտը և, այսպես ասած, նրա իրավասության սահմանները մեր արտաքին ու ներքին պայմաններում սահմանափակվում են «բանվորական հարցի»՝ վորպես բոլոր հարցերից հիմնականի՝ ներդրոծության ու իրավասության վոլորտով:

Այստեղ՝ շատ շատերը վկայակոչում է յին Վլադիմիր Իլյիչի գրություններն ու հոգիվածները: Յես չեյի կամենա մեջբերում անել իմ ուսուցչից՝ ընկ. Լենինից, վորովհետև նա այստեղ չէ,

և յես յերկյուղ եմ կրում, վոր, դուցե, նրան սխալ ու վոչ տեղին վկայակոչեմ: Բայց և այնպես, յես հարկադրված եմ մեջբերել աքսիոմատիկ մի տեղը, վորը վոչ մի թյուրիմացության տեղիք չի տալիս, վորպեսզի ընկերները կասկածներ չունենան: ազգային հարցի տեսակարար կշռի վերաբերմամբ: Ինքնորոշման վերաբերյալ հոգվածում, քննարկելով Մարքսի նամակը ազգային հարցի մասին, ընկ. Լենինն այսպիսի հետևություն ե անում.

«Բանվորական հարցի» համեմատությունը ազգային հարցի ստորադիւր նշանակություն ունենալը Մարքսի համար կասկածի յենթակա չե»<sup>1</sup>:

Այստեղ ընդամենը յերկու տող ե, բայց նրանք վճռում են ամեն ինչ: Այ՛ց, սա պետք ե ականջի ող դարձնեն վոչ ըստ բանականության ջերմեռանդ մեր միջանի ընկերները:

Յերկրորդ հարցը—այդ վելիկոռուսական շովինիզմի ու տեղական շովինիզմի հարցն ե: Այստեղ հանդես յեկան ընկ. Ռակովսկին և մանավանդ ընկ. Բուխարինը, վորը առաջարկեց դեն գցել տեղական շովինիզմի վնասակարություն մասին խոսող կետը: Թե իբր ինչ կարիք կա դրադվելու մի այնպիսի փոքրիկ վորդովինչպիսին տեղական շովինիզմի վնասակարության մասին խոսող կետը: Ինչպիսին տեղական շովինիզմն ե, յերբ մենք մի այնպիսի «Գողթ» ունենք, ինչպիսին վելիկոռուսական շովինիզմն ե: Ընդհանրապես, ընկ. Բուխարինի արամադրությունը զղջական եր: Սա հասկանալի յե. տարիներով նա մեղանչել ե ազգությունների դեմ՝ ժխտելով ինքնորոշման իրավունքը,—ժամանակ ե, վերջապես, վոր զղջա: Բայց զղջալով, նա մի ուրիշ ծայրահեղություն մեջ ընկավ: Կուրյոզային ե, վոր ընկ. Բուխարինը կոչ ե անում կուսակցությանը հետևելու իր օրինակին և նույնպես զղջալու, թեև ամբողջ աշխարհը զխտե, վոր կուսակցությունն այստեղ մեղք չունի, վորովհետև նա իր գոյության հենց սկզբից (1898 թ.) ճանաչել ե ինքնորոշման իրավունքը և, հետևաբար, զղջալու բան չունի: Բանն այն ե, վոր ընկ. Բուխարինը չի հասկացել ազգային հարցի ելությունը: Յերբ ասում են, թե ազգային հարցի անկյունաքար պետք ե դարձնել վելիկոռուսական շովինիզմի դեմ պայքարելը, դրանով ուղում են նշել ուսու կոմունիստի պարտականությունը, դրանով ուղում են ասել, վոր ուսու կոմունիստի պարտականությունն ե անձամբ պայքար մղել ուսուական շովինիզմի դեմ: Յեթե ուսական շովինիզմի դեմ պայքարելուն ձեռնարկեյին վոչ

<sup>1</sup> Լենին, Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին, Յերկեր, հատ. XVII, էջ 460: Խմբ.:

Թե ոուս կոմունիստները, այլ թուրքեստանական կամ վրացական կոմունիստները, ապա նրանց այդպիսի պայքարը կղնահատեյին վորպես հակառուսական շովինիզմ: Դա կխճճեր ամբողջ դործը և կամբասպնդեր վելիկոռուսական շովինիզմը: Միայն ոուս կոմունիստները կարող են իրենց վրա վերցնել վելիկոռուսական շովինիզմի դեմ պայքարելու դործը և այն մինչև վերջը հասցնել:

Իսկ ի՞նչ են ուզում ասել, յերբ առաջարկում են պայքարել տեղական հակառուսական շովինիզմի դեմ: Դրանով ուզում են նշել տեղական կոմունիստների պարտականութունը, վոչ-ոուս կոմունիստների պարտականութունը՝ պայքարելու իրենց շովինիզմի դեմ: Մի՞թե կարելի չե ժխտել, վոր կան թեքումներ դեպի հակառուսական շովինիզմը: Ձե՞ վոր ամբողջ համազումարը ակներևորեն տեսավ, վոր տեղական շովինիզմ—վրացական, բաշկիրական և այլ շովինիզմ կա՞, վոր պետք է նրա դեմ պայքարել:

Ոուս կոմունիստները չեն կարող պայքարել թաթարական, վրացական, բաշկիրական շովինիզմի դեմ, վորովհետև յեթե ոուս կոմունիստն իր վրա վերցնի թաթարական կամ վրացական շովինիզմի դեմ պայքարելու ծանր խնդիրը, ապա նրա այդ պայքարը կղնահատի վորպես վելիկոռուսական շովինիզմի պայքար ընդդեմ թաթարների կամ վրացիների: Դա կխճճեր ամբողջ դործը: Միայն թաթար, վրացի և այլն կոմունիստները կարող են պայքարել թաթարական, վրացական և այլն շովինիզմի դեմ, միայն վրացի կոմունիստները հաջողութամբ կարող են պայքարել իրենց վրացական նացիոնալիզմի կամ շովինիզմի դեմ: Սա յե վոչ-ոուս կոմունիստների պարտականութունը: Ահա թե ինչու անհրաժեշտ է նշել թեզիսներում՝ ոուս կոմունիստների (յես նկատի ունեմ վելիկոռուսական շովինիզմի դեմ պայքարելը) և վոչ-ոուս կոմունիստների (յես նկատի ունեմ նրանց պայքարն ընդդեմ հակահայկական, հակաթաթարական, հակառուսական շովինիզմի) այս յերկկողմանի խնդիրը: Առանց սրան թեզիսները միակողմանի դուրս կգան, առանց սրան վոչ պետական, վոչ էլ կուսակցական շինարարության մեջ վոչ մի ինտերնացիոնալիզմ չի կարելի ստեղծել:

Յեթե մենք պայքար մղենք միայն վելիկոռուսական շովինիզմի դեմ, ապա այդ պայքարն սուվերի մեջ կթողնի թաթարական և այլ շովինիստների պայքարը, վորը դարգանում է տեղերում և վորը վստանգավոր է մանավանդ այժմ, նեպի պայմաններում: Մենք չենք կարող պայքար չմղել յերկու Ֆրոնտով, վորովհետև միայն յերկու Ֆրոնտով պայքարելու պայմանով է—մի կողմից,

մեր շինարարական աշխատանքում հիմնական վտանգ հանդիսացող վեյիկոուսական շովինիզմի դեմ պայքարելու և, մյուս կողմից, տեղական շովինիզմի դեմ պայքարելու պայմանով,—վոր կարելի կլինի հանդուրժյան հասնել, վորովհետև առանց այդ յերկկողմանի պայքարի ուս և այլ ազդի բանվորների ու դյուզացիների վոչ մի դողում չի ստացվի: Հակառակ դեպքում կարող և ստացվել տեղական շովինիզմի քաջալերում, տեղական շովինիզմի պարզևատրման քաղաքականութուն, վորը մենք չենք կարող թույլ տալ:

Թույլ տվեք ինձ այստեղ վկայակոչելու ընկ. Լենինին: Այս բանը յես չեյի անի, բայց վորովհետև մեր համազումարում շատ ընկերներ կան, վորոնք ծուռումուռ մեջբերումներ են անում ընկ. Լենինից, ազավազելով նրան՝ թույլ տվեք մի քանի խոսք կարդալ ընկ. Լենինի՝ բոլորին հայտնի մի հոդվածից.

«Պրոլետարիատը պետք և պահանջի այն դադութների ու ազգերի քաղաքական անջատման ազատութուն, վորոնց ճշնշում և «նրա» ազդը: Հակառակ դեպքում՝ պրոլետարիատի ինտերնացիոնալիզմը կմնա դատարկ ու խոսքի ինտերնացիոնալիզմ. վո՛չ վստահութուն, վո՛չ ևլ դասակարգային համբարաշխութուն հնարավոր չեն ճնշված ու ճնշող ազգերի բանվորների միջև»<sup>1</sup>:

Որանք, այսպես ասած, տիրապետող կամ նախկին տիրապետող ազգի պրոլետարներն պարտականութուններն են: Այնուհետև նա խոսում և արդեն առաջներում ճնշված ազգերի պրոլետարների կամ կոմունիստների պարտականության մասին.

«Մյուս կողմից, ճնշված ազգերի սոցիալիստները պետք և մանավանդ պաշտպանեն ու կենսագործեն ճնշված ազգի բանվորների լիակատար և այնպայմանական, այդ թվում նաև կադմակերպական, միասնութունը ճնշող ազգի բանվորների հետ: Առանց սրան անհնարին և պաշտպանել պրոլետարիատի ինքնուրույն քաղաքականութունը և նրա դասակարգային համերաշխութունը այլ յերկկրների պրոլետարիատի հետ՝ բուրժուադիայի բոլոր ու ամեն տեսակի արարքների, դավաճանութունների ու խարդախութունների պայմաններում, վորովհետև ճնշված ազգերի բուրժուադիան ազգային ազատագրու-

<sup>1</sup> Լենին, Սոցիալիստական հեղափոխութունը և ազգերի ինտերնացիոնալիզմը, Յերկեր, հատ. XIX, էջ 41:—Խմբ.:

Թյան լողունդները շարունակ վերածում ե բանվորներին խաբելու դործի»<sup>1</sup> :

Ինչպես տեսնում եք, յեթե արդեն գնանք ընկեր Լենինի հետքերով, — իսկ այստեղ ընկերներից վոմանք նրա անունով են յերդվում, — ապա անհրաժեշտ ե յերկու թեղիսն ել՝ ինչպես վելիկոուսական շովինիզմի դեմ պայքարելու, այնպես ել տեղական շովինիզմի դեմ պայքարելու թեղիսը՝ թողնել բանաձևի մեջ, վորպես մի յերևույթի յերկու կողմերը, ինչպես առհասարակ շովինիզմի դեմ պայքարելու թեղիսներ :

Յես սրանով վերջացնում եմ առարկություններս այն հետտորների դեմ, վորոնք այստեղ հանդես յեկան :

<sup>1</sup> Լենին, Սոցիալիստական Հեղափոխությունը և ազդերի ինքնարշման իրափունքը, Յերկեր, Հ. XIX, էջ 41 : — Խմբ. :



# ԱԶԳԱՅԻՆ ՄՈՄԵՆՏՆԵՐԸ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՅԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՁ

(1923 թ. ապրիլին ՌԿ(Բ)Կ XII համագումարի  
ընդունած բանաձևը)

## I

1) Կապիտալիզմի զարգացումը տակավին անցյալ դարում հայտարերեց արտադրության ու փոխանակության յեղանակների ինտերնացիոնալացման, ազգային ինքնամփոփության վոչնչացման, ժողովուրդների տնտեսական մերձեցման և հսկայական տերիտորիաները վորպես մի կապակցված ամբողջություն աստիճանաբար միավորելու տենդենց: Կապիտալիզմի հետագա զարգացումը, համաշխարհային շուկայի զարգացումը, ծովային ու յերկաթուղային մեծ ճանապարհների գործի կարգավորումը, կապիտալի արտածումը և այլն, ե՛լ ավելի ուժեղացրին այդ տենդենցը՝ ամենաբազմազան ժողովուրդները կապելով աշխատանքի միջազգային բաժանման և բազմակողմանի փոխադարձ կախման կապերով: Վորքան վոր այդ սրոցեսն արտացոլում էր արտադրողական ուժերի վիթխարի զարգացումը, վորքան վոր այն հեշտացնում էր ազգային առանձնացման (обособленность) և զանազան ժողովուրդների շահերի հակադրության վոչնչացումը, այն յեղել է և մնում է առաջադեմական սրոցես, վորովհետև նյութական նախադրյալներ է նախապատրաստում ազգայա համաշխարհային սոցիալիստական տնտեսության համար:

2) Բայց այս տենդենցը զարգացել է յուրահատուկ ձևերով, վորոնք բոլորովին չեն համապատասխանում նրա ներքին պատմական իմաստին: Ժողովուրդների փոխադարձ կախումը և տերիտորիաների տնտեսական միավորումը կապիտալիզմի զարգացման ընթացքում սահմանվում էին վոչ թե ժողովուրդների՝ վորպես իրավահավասար միավորների համադործակցության ճանապարհով, այլ մի ժողովուրդ մյուսների կողմից հպատակեցնելու կար-

գով, ավելի պակաս զարգացած ժողովուրդներին ավելի շատ զարգացած ժողովուրդների կողմից ճնշելու և շահագործելու կարգով: Գաղութային թալաններ ու հափշտակումներ, աղբային ճնշում ու անհավասարություն, իմպերիալիստական կամայականություն ու բռնություն, զաղութային ստրկություն ու աղբային իրավազրկություն, վերջապես, «քաղաքակիրթ» ազգերի պայքարը միմյանց դեմ՝ «անքաղաքակիրթ» ժողովուրդների վրա իշխելու համար— սրանք են այն ձևերը, վորոնց շրջանակներում ընթացել և ժողովուրդների տնտեսական մերձեցման պրոցեսը: Ուստի և՛ միավորման տենդենցի հետ մեկտեղ աճում եր այդ միավորման բռնի ձևերը վոչնչացնելու տենդենցը, աճում եր ճնշված զաղութները և կախյալ աղբյուրներն իմպերիալիստական ճնշումից ազատագրելու պայքարը: Վորքան վոր այդ յերկրորդ տենդենցը ճնշված մասսաների ըմբոստացում եր նշանակում ընդդեմ միավորման իմպերիալիստական ձևերի, վորքան վոր դա ժողովուրդների միավորում եր պահանջում՝ համագործակցության ու կամավոր միության սկզբունքներով, դա յեղել և և մնում և առաջադիմական տենդենց, վորովհետև դա հողեկան նախադրյալներ և նախադատութեան համար:

**Յ) Գաղութային պետությունների վերջին կես հարյուրամյակի պատմությունը:** Կապիտալիստական դարգացման շրջանակներում այդ տենդենցների միջև յեղած անհաշտ հակասությունը դրված և յեղել բուրժուական զաղութային պետությունների ներքին անդրություն ու որդանական անկայունության հիմքում: Անխուսափելի կոնֆլիկտներ այդպիսի պետությունների ներսում ու անխուսափելի պատերազմներ այդպիսի պետությունների միջև. հին զաղութային պետությունների քայքայում և նորերի գոյացում. զաղութների նոր հետամտում ու բազմազգ պետությունների նոր քայքայում, վորը տանում և դեպի աշխարհի քաղաքական բարտեյի նոր վերածնունդը—սրանք են այս հիմնական հակասության արդյունքները: Մի կողմից՝ հին Ռուսաստանի, Ալատրո-Հունգարիայի, Թյուրքիայի քայքայումը, մյուս կողմից՝ այնպիսի զաղութային պետությունների պատմությունը, ինչպիսիք են՝ Մեծ Բրիտանիան և հին Գերմանիան, վերջապես, իմպերիալիստական մեծ պատերազմը և զաղութային ու իրավապակաս ժողովուրդների հեղափոխական շարժման աճումը—այս բոլոր և սրանց նման



այդ ազդու թյունների լավագույն տարրերը հեռացան կերենչ չինս-  
յից, ապա մեր կուսակցութեան ազատագրական քաղաքականու-  
թյունը կուսակցութեան համար նվաճեց այդ ազդու թյունների  
լայն մասանների համակրանքն ու աջակցությունը՝ ցարիզմի ու  
խմբերխալիստական ուսական բուրժուազիայի դեմ մեր կուսակ-  
ցութեան միշտ պայքարում: Հաղիվ թե կարելի չե կասկածել այն  
մասին, վոր այս համակրանքն ու այս աջակցությունը հանդիսա-  
ցան այն վճռողական մոմենտներից մեկը, վորոնք վորոշեցին մեր  
կուսակցութեան հաղթությունը հոկտեմբերյան որերին:

5) Հոկտեմբերյան հեղափոխությունը տվեց մեր կուսակցու-  
թեան վճիռների դործնական հանրազումարներն ազգային հարցի  
վերաբերմամբ: Տապալելով կարվածատերերի ու կապիտալիստնե-  
րի, ազգային ճնշման հիմնական կրողների իշխանությունը և իշ-  
խանութեան դուրս կանգնեցնելով պրոլետարիատը՝ Հոկտեմբե-  
րյան հեղափոխությունը մի հարվածով կտրատեց ազգային ճնշման  
չլիքները, շուտ տվեց ժողովուրդների միջև յեղած հին հարաբե-  
րությունները, խախտեց ազգային հին թշնամությունը,  
մաքրեց հողը ժողովուրդների համազործակցութեան համար և վոչ  
միայն Ռուսաստանում, այլև Յեյրոսայում ու Ասիայում ուսա-  
կան պրոլետարիատի համար նվաճեց նրա այլազգի յեղբայրակից-  
ների վստահությունը: Հաղիվ թե հարկ կա ապացուցելու, վոր  
ուսական պրոլետարիատն առանց այսպիսի վստահութեան չեր  
կարողանա հաղթել Կոլչակին ու Դենիկինին, Յուդենիչին ու  
Վրանգելին: Մյուս կողմից, անկասկած և, վոր ճնշված ազգերն ել  
չեյին կարողանա իրենց ազատագրմանը հասնել՝ առանց Ռուսաս-  
տանի կենտրոնում պրոլետարիատի դիկտատուրա հաստատվելու:  
Ազգային թշնամանքն ու ազգային ընդհարումները անխուսափելի,  
անխափանելի չեն, քանի կապիտալն և իշխանութեան դուրս կանգ-  
նած, քանի նախկին «պետական» ազգի մանր բուրժուազիան, և  
ամենից առաջ դուրազիությունը, նացիոնալիստական նախադա-  
շարմունքներով լեցուն լինելով՝ կապիտալիստների հետևից են  
գնում, և, ընդհակառակը, ազգային խաղաղությունն ու ազգային  
ազատությունը կարելի չե ապահովված համարել, յեթե դուրա-  
զիությունն ու մանր-բուրժուական այլ շերտերը պրոլետարիատի  
հետևից են գնում, այսինքն՝ յեթե ապահովված և պրոլետարիա-  
տի դիկտատուրան: Ուստի և՛ խորհուրդների հաղթությունը և  
պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումն այն բազան, այն  
հիմքն են, վորի վրա կարող և կառուցվել ժողովուրդների յեղ-

բայրական համադործակցութիւնը պետական միասնական միութեան մեջ :

6) Բայց Հոկտեմբերյան հեղափոխութեան արդեւորութիւնները չեն սպառնում ազգային ճնշման վոչնչացմամբ, ժողովուրդները միավորման համար հող ստեղծելով: Հոկտեմբերյան հեղափոխութիւնն իր զարգացման ընթացքում այդ միավորման ձևերն եւ մշակեց, նշեց հիմնական այն դժբերը, վորոնցով պետք է կառուցվի ժողովուրդները վորպէս միութենական մի պետութիւն միավորվելը: Հեղափոխութեան առաջին շրջանում, յերբ արդութիւնները աշխատավոր մասսաներն առաջին անգամ իրենց զգացին ազգային ինքնուրույն մեծութիւններ, մինչդեռ ոտարերկրյա ինտերվենցիայի սպառնալիքը տակալին իրական վտանգ չէր ներկայացնում, ժողովուրդները համադործակցութիւնը դեռեւս չունէր միանգամայն վորոշ, խստորեն հաստատված ձև: Քաղաքացիական պատերազմի ու ինտերվենցիայի շրջանում, յերբ ազգային հանրապետութիւնների ռազմական ինքնապաշտպանութեան շահերը առաջին պլանի վրա ելին դրվել, այնինչ տնտեսական շինարարութեան հարցերը տակալին հերթական չեյին, — համադործակցութիւնը ռազմական միութեան ձև ընդունեց: Վերջապէս, հետպատերազմյան շրջանում, յերբ պատերազմից քայքայված արտադրողական ուժերի վերականգնման հարցերն առաջնահերթ դարձան, — ռազմական միութիւնը լրացվեց տնտեսական միութեամբ: Ազգային հանրապետութիւնները վորպէս խորհրդային Հանրապետութիւնները Միութիւն միավորվելը համադործակցութեան ձևի վերը զարգացման ավարտման ետպէս է, վորն այս անգամ ընդունեց ժողովուրդները վորպէս խորհրդային բազմազգ միասնական պետութիւն ռազմա-տնտեսապէս և քաղաքականապէս միավորվելու բնույթ:

Այսպիսով, պրոլետարիատը խորհրդային հասարակակարգում գտավ ազգային հարցի ճիշտ լուծման բանալին, նա դրա մեջ հայտնագործեց ազգային իրավահավասարութեան ու կամավորութեան սկզբունքների վրա հիմնված կայուն բազմազգ պետութիւն կազմակերպելու ուղին:

7) Բայց գտնել ազգային հարցի ճիշտ լուծման բանալին՝ տակալին չի նշանակում լիովին լուծել այն և վերջնականապէս սպառել այդ լուծումը նրա կոնկրետ-գործնական իրականացումով: Հոկտեմբերյան հեղափոխութեան առաջադրած ազգային ծրագրի ճիշտ կենսագործման համար անհրաժեշտ է նաև հաղթահարել այն արգելքները, վորոնք մեզ ժառանգութիւն են

աբված աղղային ճնշման անցած շրջանից և վորոնք չեն կարող հաղթահարվել մի հարվածով՝ կարճ ժամանակամիջոցում :

Այդ ժառանգությունը կաղմում են, նախ, մեծապետական շովինիզմի մնացուկները, շովինիզմի, վորը վելիկոռուսների յերբեմնի արտոնյալ դրության արտացոլումն է : Այդ մնացուկները տակալին ապրում են մեր կենտրոնական և տեղական խորհրդային աշխատողների գլուխներում, դրանք բուն են դրել մեր կենտրոնական և տեղական պետական հիմնարկներում, դրանց ամբացնելու յեն դալիս վելիկոռուսական-շովինիստական «նոր» ամենավելիովյան հովերը, վորոնք նեպի կապակցությամբ ավելի ու ավելի յեն ուժեղանում : Դրանք դործնականապես արտահայտվում են ուս խորհրդային չինովնիկէերի անապարծ-արհամարհական և անհողի-բյուրոկրատական վերաբերմունքով դեպի աղղային հանրապետությունների կարիքներն ու պահանջները : Բազմազգ խորհրդային պետությունն իրոք հաստատուն, իսկ ժողովուրդների համագործակցությունը նրանում իրոք յեղբայրական կարող են դառնալ լոկ այն դեպքում, յեթե մեր պետական հիմնարկների սլրակտիկայում այդ մնացուկները վճռապես ու անդառնալիորեն ջնջվեն : Դրությունը մի շարք աղղային հանրապետություններում (Ուկրաինա, Բելոռուսիա, Ադրբեջան, Թուրքեստան) նրանով է բարդանում, վոր խորհրդային իշխանության հիմնական հենարանը հանդիսացող բանվոր դասակարգի նշանակելի մասը պատկանում է վելիկոռուս աղղությանը : Այդ շրջաններում քաղաքի ու դյուղի, բանվոր դասակարգի ու դյուղացիության զոդումը ուժեղագույն արդելքների յե հանդիպում՝ թե՛ կուսակցական և թե՛ խորհրդային որդաններում յեղած վելիկոռուսական շովինիզմի մնացուկների կողմից : Այս պայմաններում ուսական կուլտուրայի առավելությունների մասին յեղած յոսակցությունները և այն դրույթի առաջադրումը, թե ուսական ավելի բարձր կուլտուրան անխուսափելիորեն հաղթելու յե ավելի հետամնաց ժողովուրդների կուլտուրաներին (ուկրաինական, ադրբեջանական, ուղբեկական, կիրգիզական և այլն), վոչ այլ ինչ են, բայց յեթե վելիկոռուս աղղության տիրապետությունն ամբապնդելու փորձ : Ուստի և՛ վելիկոռուսական շովինիզմի մնացուկների դեմ վճռական պայքար մղելը մեր կուսակցության առաջին հերթական խնդիրն է :

Այդ ժառանգությունը, յերկրորդ, կաղմում է Հանրապետությունների Միության աղղությունների փաստական, այսինքն՝ անտեսական ու կուլտուրական անհավասարությունը : Հոկ-

տեմբերյան հեղափոխութեան ձեռք բերած ազգային իրավահա-  
վասարութեանը ժողովուրդների մեծ նվաճում է հանդիսանում ,  
բայց այն ինքնին չի լուծում ամբողջ ազգային հարցը :  
Մի շարք հանրապետութիւններ ու ժողովուրդներ, վորոնք չեն  
անցել կամ գրեթէ չեն անցել կապիտալիզմի բովով, վորոնք չու-  
նեն կամ գրեթէ չունեն իրենց պրոլետարիատը, վորոնք այդ  
պատճառով ել հետ են մնացել տնտեսական ու կուլտուրական  
տեսակետից, առանց դրսից իրական ու տեական ողնութիւն  
ստանալու ի վիճակի չեն լիովին ոգտագործելու այն իրավունք-  
ներն ու հնարավորութիւնները, վոր նրանց ընձեռում է ազգա-  
յին իրավահավասարութեանը, ի վիճակի չեն բարձրանալու դար-  
դացման ավելի բարձր աստիճանը և այսպիսով հասնելու առաջ  
անցած ազգութիւններին : Փաստական այս անհավասարութեան  
պատճառները թագնված են վոչ միայն այս ժողովուրդների  
պատմութեան մեջ, այլև ցարիզմի ու ռուսական բուրժուազիայի  
քաղաքականութեան մեջ, վորոնք ձգտել են ծայրամասերը դարձ-  
նելու արդիւնաբերապես զարգացած կենտրոնական շրջանների  
կողմից շահագործվող բացառապես հումքային շրջաններ : Անկա-  
րելի յե կարճ ժամանակամիջոցում հաղթահարել այս անհավա-  
սարութեանը, մի յերկու տարում վերացնել այս ժառանգութիւն-  
ներ : Մեր կուսակցութեան դեռևս X համագումարը նշել է, վոր  
« փաստական ազգային անհավասարութեան վոչնչացումը տեական  
պրոցես է, վոր պահանջում է համառորեն և հաստատակամորեն  
պայքարել ազգային ճնշման ու զաղութային ստրկութեան բոլոր  
մնացուկների դեմ » : Բայց անպատճառ հարկավոր է հաղթահա-  
րել այն : Յեկ այն կարելի յե հաղթահարել միայն ռուս պրոլե-  
տարիատի կողմից իրական ու տեական ողնութիւն ցույց տա-  
լով Միութեան հետամնաց ժողովուրդներին՝ նրանց տնտեսական  
ու կուլտուրական առաջադիմութեան գործում : Այս ողնութիւնն  
առաջին հերթին պետք է արտահայտվի առաջներում ճնշված  
ազգութիւնների հանրապետութիւններում արդիւնաբերական  
ոջախներ ստեղծելու համար մի շարք գործնական միջոցներ ձեռք  
ստանելով՝ առաջնապէս չափով գործի մեջ գրավելով տե-  
ղական բնակչութիւնը : Վերջապէս, այս ողնութիւնը, X համա-  
դումարի բնածէի համաձայն, գուղահետ պետք է ընթանա այն  
պայքարին, վոր աշխատավոր մասսաները մղում են իրենց սո-  
ցիալական դիրքերի ամրապնդման համար՝ նեպի կապուկցու-  
թեամբ ուժեղացող տեղական ու յեկվոր շահագործողական վեր-  
նախովերբի դեմ : Վորքան վոր այդ հանրապետութիւններն ա-

ռավել լայնս գլուղատնտեսական շրջաններ են, ներքին սոցիալա-  
կան միջոցառումները պետք է ամենից առաջ ընթանան աշխա-  
տավորական մասսաներին ի հաշիվ պետական ազատ ֆոնդի հույ  
տալու ճանապարհով: Առանց այս բանի հիմք չի ա հույս  
դնելու միութենական միասնական պետութեան շրջանակներում  
ժողովուրդների կանոնավոր ու հաստատուն համագործակցու-  
թյունը կարգավորելու վրա: Ուստի և՛ աղղությունների փաս-  
տական անհավասարությունը վերացնելու պայքարը, հետամնաց  
ժողովուրդների կուլտուրական ու տնտեսական մահարգակը  
բարձրացնելու պայքարը մեր կուսակցութեան յերկրորդ հերթա-  
կան խնդիրն է:

Այս ժառանգությունը, վերջապես, կազմում են նացիոնա-  
լիզմի մնացուկները մի ամբողջ շարք ժողովուրդների մեջ, վորոնք  
կրել են աղբային ճնշման ծանր լուծը և տակավին չեն կարողա-  
ցել աղատագրվել աղբային հին վիրավորանքների զգացումից:  
Այդ մնացուկների գործնական արտահայտությունն են հանդի-  
սանում առաջներում ճնշված ժողովուրդների աղբային վորոշ  
խորթացածությունը և լիակատար վտահուութեան բացակայու-  
թյունը դեպի այն միջոցառումները, վորոնք ուսանելից են դա-  
լիս: Մակայն, իրենց կազմի մեջ միջանի աղղություններ ունե-  
ցող հանրապետություններում այս սլաշապանողական նացիոնա-  
լիզմը հաճախ վերածվում է հարձակողական նացիոնալիզմի,  
ալեկի ուժեղ աղղութեան թունդ շովինիզմի, վոր ուղղված է այդ  
հանրապետությունների թույլ աղղությունների դեմ: Վրացա-  
կան շովինիզմը (Վրաստանում), վոր ուղղված է հայերի,  
ոսերի, աջարացիների ու արխաղների դեմ, աղբրեջանական շովի-  
նիզմը (Աղբրեջանում), վոր ուղղված է հայերի դեմ, ուղբեկա-  
կան շովինիզմը (Բուխարայում ու Սորբզմում), վոր ուղղված է  
թուրքմենների ու կիրգիզների դեմ, հայկական շովինիզմը և այլն,  
— շովինիզմի այս բոլոր տեսակները, վորոնց, այն ել  
ասած, իրախուսում են նեպի ու կոնկուրենցիայի պայ-  
մանները, մեծադույն չարիք են, վորոնք սպառնում են մի  
բանի աղբային հանրապետություններ դարձնել գղզգոցի ու  
խառնակչութեան ասպարեզ: Ինչ ասել կուզի, վոր այս բո-  
լոր յերևույթներն արգելակում են ժողովուրդների փաս-  
տական միավորումը վորպես միասնական պետական միություն:  
Վորքան վոր նացիոնալիզմի մնացուկները հանդիսանում են վե-  
լիկոուսական շովինիզմից պաշտպանվելու յուրահասուկ մի ձև,  
վելիկոուսական շովինիզմի դեմ վճռական պայքար մղելը ամե-

նահաստատուն միջոցն և նացիոնալիստական մնացուկները հաղթահարելու համար: Իսկ վորքան վոր այդ մնացուկները վերածվում են տեղական շովինիզմի, վորն առանձին հանրապետություններում ուղղված և ազգային թույլ խմբերի դեմ, ուղղապես պայքարն այդ մնացուկների դեմ կուսակցություն անդամների պարտականությունն է: Ուստի և՛ նացիոնալիստական մնացուկների և, ամենից առաջ, այդ մնացուկները շովինիստական ձևերի դեմ պայքարելը մեր կուսակցության յերրորդ հերթական խնդիրն է:

8) Հնի ժառանգություն ամենացայտուն արտահայտություններից մեկը պետք է համարել այն փաստը, վոր կենտրոնում և տեղերում խորհրդային չինուիսիկները մի մասը Հանրապետությունների Միությունը դնահաստում և վո՛չ թե իրրև պետական հավասար միավորների մի միություն, վորը՝ կոչված և ապահովելու ազգային հանրապետությունների ազատ զարգացումը, այլ իրրև մի քայլ դեպի հանրապետությունների վերացումը, իրրև այսպես կոչված «միասնական-անբաժանելին» կաղմելու սկիզբ:

Հնի ժառանգության մի այսպիսի արդյունքն էլ պետք է համարել ՌՄՖՍՀՂ դերատեսչություններից վոմանց ձգտումը՝ իրենց յենթարկել ավտոնոմ հանրապետությունների ինքնուրույն կոմիտարիատները և այդ հանրապետությունները վերացնելու ճանապարհ հարթել:

Դատապարտելով այդպիսի ըմբռնումը իրրև հակապրոլետարական ու սեակցիոն ըմբռնում և հռչակելով ազգային հանրապետությունների գոյություն ու հետագա զարգացման բացարձակ անհրաժեշտությունը՝ համադումարը կոչ է անում կուսակցության անդամներին աչալուրջ հետևելու այն բանին, վորպետղի հանրապետությունների միավորումը և կոմիտարիատների միաձուլումը շովինիստորեն արամադրված խորհրդային չինուիսիկները չողտագործեն՝ իրրև ազգային հանրապետությունների տնտեսական ու կուլտուրական կարիքներն անտեսելու իրենց վորձերի քողարկում: Կոմիտարիատների միաձուլումը մի քննություն և խորհրդային ապարատի համար, յեթե դործնականում այս վորձը մեծապետական ուղղություն ստանար, ապա կուսակցությունը ստիպված պետք է լիներ այսպիսի աղճատման դեմ ձեռք առնելու ամենավճռական միջոցներ՝ ընդհուպ մինչև միքանի կոմիտարիատների միաձուլումը վերացնելու հարցի դրումը՝ մինչև վոր խորհրդային ապարատն առաջիկայում պատշաճ կերպով վերադաստիարակվի իսկապես պրոլետարադեմոկրատիկ և իսկապես յեղբայրական ուշադրու-

Թյան վեգով դեպի փոքր ու հետամնաց ազգությունների կարիքները և պահանջները :

9) Հանրապետությունների Միությունը, վոր ստեղծված և առանձին հանրապետությունների բանվորների ու գյուղացիների հավասարության և կամավորության սկզբունքներով, հանդիսանում է սլրուխտարիատի առաջին փորձը՝ անկախ յերկիրների միջադաշին փոխհարաբերությունների կարգավորման գործում և առաջին քայլը՝ ապագա Աշխատանքի Համաշխարհային Սորհըրդային Հանրապետության ստեղծման ուղղությամբ : Վորքան վոր Հանրապետությունների Միությունը ժողովուրդների համակեցության նոր ձև է, միասնական միութենական պետություն մեջ նրանց համագործակցելու մի նոր ձև, այն պետության, վորի շրջանակներում պետք է վերացվեն վերը ուրվագծված մնացուկները ժողովուրդների միատեղ աշխատանքի սլրոցեսում, — Միության բարձրագույն որդանները այնպես պետք է կառուցված լինեն, վորպեսզի լիովին արտացոլեն Միության բոլոր ազգությունների վո՛չ միայն ընդհանուր կարիքներն ու պահանջները, այլև առանձին ազգությունների հատուկ կարիքներն ու պահանջները : Քեստի և՛ Միության գոյություն ունեցող կենտրոնական որդանների հետ միասին, վորոնք ամբողջ Միության աշխատավոր մաստաների ներկայացուցչությունն են հանդիսանում՝ անկախ ազգությունից — հավասարության սկզբունքներով պետք է ստեղծվի ազգությունների ներկայացուցչության մի հատուկ որդան : Միության կենտրոնական որդանները այսորինակ կառուցումը լիակատար հնարավորություն կտար զբալյուն կերպով ունկընդբելու ժողովուրդների կարիքներին ու պահանջներին, իր ժամանակին ցույց տալու նրանց անհրաժեշտ ոգնություն, ստեղծելու լիակատար փոխադարձ վստահության իրադրություն և, այսպիսով, ամենաանհիվանդազին միջոցներով վերացնելու վերը հիշված ժառանգությունը :

10) Յեկնելով ասվածից, համագումարը հանձնարարում է կուսակցության անդամներին հասնելու, իրրև գործնական միջոցների, այն բանին, վորպեսզի՝

ա) Միության կենտրոնական որդանները կառուցելիս սպահովված լինի առանձին հանրապետությունների իրավունքների ու պարտականությունների հավասարությունը՝ ինչպես նրանց փոխադարձ հարաբերությունների մեջ, այնպես ել Միության կենտրոնական իշխանության նկատմամբ .

բ) Միության բարձրագույն որդանների սխտեմում հավա-

սարութեան սկզբունքներով հիմնովի առանց բացառութեան բազմա-  
ազգային հանրապետութեաններէ ու ազգային մարզերի ներկա-  
յացուցչութեան մի հատուկ մարմին՝ ըստ կարելոյն հաշիւի առ-  
նելով այդ հանրապետութեաններէ կազմի մեջ մտնող բոլոր ազ-  
գութեաններէ ներկայացուցչութեանը.

դ) Միութեան գործադիր որդանները կառուցվեն այնպիսի  
սկզբունքներով, վորոնք ապահովում են հանրապետութեաններէ  
ներկայացուցիչներէ իրական մասնակցութեանը նրանց մեջ և  
Միութեան ժողովուրդներէ կարիքներէ ու պահանջներէ բախ-  
արումը.

զ) հանրապետութեաններին ընձեռվեն բավականաչափ լայն  
Ֆինանսական և մասնավորապէս բյուջեական այնպիսի իրավունք-  
ներ, վորոնք՝ ապահովեն նրանց սեփական պետական-վար-  
չական, կուլտուրական ու տնտեսական ձեռներեցութեան ցուցա-  
բերման հնարավորութեանը.

ե) ազգային հանրապետութեաններէ ու մարզերէ որդանները  
կառուցվեն առավելապէս համապատասխան ժողովուրդներէ լե-  
զուն, կենցաղը, բարքերն ու սովորութեանները գիտեցող տեղա-  
ցիներէից.

զ) հրատարակվեն հատուկ որենքներ, վորոնք ապահովեյին  
մայրենի լեզվի գործածութեանը բոլոր պետական այն որդան-  
ներում և բոլոր այն հիմնարկներում, վորոնք սպասարկում են  
տեղական այլազգի բնակչութեանը և ազգային փոքրամասնու-  
թեանները, որենքներ, վորոնք հեղափոխական ամբողջ խտտու-  
թեամբ հետապնդում և պատժում են ազգային իրավունքներէ և  
մանավանդ ազգային փոքրամասնութեաններէ իրավունքներէ բո-  
լոր խախտիչներին.

է) ուժեղացվի Կարմիր բանակում դաստիարակչական աշխա-  
տանքը՝ Միութեան ժողովուրդներէ յեղաբայութեան և համերաչ-  
խութեան գաղափարները արմատավորելու վողով և գործնական  
միջոցառումներ ձեռք առնվեն՝ ազգային գործասեր կազմակեր-  
պելու վերաբերմամբ՝ պահպանելով այն բոլոր միջոցները, վո-  
րոնք անհրաժեշտ են հանրապետութեաններէ լիակատար պաշտ-  
պանութեանն ապահովելու համար:

## II

1) Մեր կուսակցութեան կազմակերպութեաններէ գարգա-  
ցումն ազգային հանրապետութեաններէ մեծամասնութեան մեջ

ընթացում է այնպիսի պայմաններում, վորոնք լիովին չեն, վար նպաստում են նրանց աճմանն ու ամրացմանը: Այս հանրապետությունների տնտեսական հետամնացությունը, աղքատյին պրոլետարիատի վորքարթիվ լինելը, տեղացի կուսակցական հին աշխատողների կադրերի պակասությունը կամ նույնիսկ բացակայությունը, մայրենի լեզվով լուրջ մարքսիստական գրականության բացակայությունը, կուսդաստիարակչական աշխատանքի թուլությունը, վերջապես, արմատական-ազգայնական տրադիցիաների մնացուկների առկայությունը, տրադիցիաներ, վորոնք դեռևս չեն վերացել,—տեղացի կոմունիստների մեջ վորոշ թեքում են առաջացրել աղքատյին առանձնահատկությունները գերադնահատելու ուղղությամբ, պրոլետարիատի դասակարգային շահերը թերադնահատելու ուղղությամբ, թեքում դեպի նացիոնալիզմը: Այս յերևույթը առանձնապես վտանգավոր է դառնում մի քանի ազգություն ունեցող հանրապետություններում, վորտեղ նա հաճախ ընդունում է ավելի ուժեղ ազգության կոմունիստների դեպի շովինիզմը կատարվող թեքման ձև, մի թեքում, վորն իր սուբ ծայրով ուղղված է թույլ ազգությունների կոմունիստների դեմ (Վրաստան, Ադրբեջան, Բուխարա, Նորեղմ): Դեպի նացիոնալիզմը յեղող թեքումը վնասակար է այն տեսակետից, վոր նա, արդելակելով ազգային բուրժուազիայի գաղափարային ազդեցությունից ազգային պրոլետարիատի ազատվելու պրոցեսը՝ դժվարացնում է տարբեր ազգությունների պրոլետարների համախմբումն իրրև միասնական ինտերնացիոնալ կազմակերպություն:

2) Մյուս կողմից, ուսական ծագում ունեցող կուսակցական հին աշխատողների բազմաքանակ կադրերի առկայությունն ինչպես կուսակցության կենտրոնական հիմնարկներում, այնպես էլ ազգային հանրապետությունների կոմկուսների կազմակերպություններում, կուսաշխատողներ, վորոնք ծանոթ չեն այդ հանրապետությունների աշխատավորական մասսաների բարքերին, սովորույթներին ու լեզվին և այդ պատճառով էլ միշտ չեն, վոր դրայուն են դեպի նրանց կարիքները,—մեր կուսակցության մեջ թեքում է առաջացրել կուսակցական աշխատանքում ազգային առանձնահատկություններն ու ազգային լեզուն թերազնահատելու ուղղությամբ, առաջացրել է գոող-արհամարհական վերաբերմունք դեպի այդ առանձնահատկությունները, թեքում դեպի վելիկոուսական շովինիզմը: Այս թեքումը վնասակար է վոր միայն այն պատճառով, վոր այն, արդելակելով ազգային լեզուն իմացող տեղացիներից կոմունիստական կադրեր կազմելու դոր-

տությունների պրոլետարական մասսաներից կտրվելու վտանգ, այլև, ամենից առաջ, այն պատճառով, վոր դա անում ու անեցնում է վերը ուրվագծված թեքումը դեպի նացիոնալիզմ՝ ժվարացնելով նրա դեմ պայքարելը:

3) Դատապարտելով այդ յերկու թեքումն էլ, վորպես կոմունիզմի դործի համար մնաստեղար ու վտանգավոր թեքումներ, կուսակցության անդամների ուշադրությունը դարձնելով այն հատուկ մնաստեղարության ու հատուկ վտանգավորության վրա, վոր ունի դեպի վեխիդուռուսական շովինիզմը յեղած թեքումը, համազումարը կոչ է անում կուսակցությանը՝ շուտավույթ կերպով վերացնելու մեր կուսակցական շինարարությունից հնի այդ մնացուկները:

Համազումարը հանձնարարում է կենտկոմին կիրառել վորպես դործնական միջոցներ՝

ա) աղբյային հանրապետությունների տեղացի կուսակցական աշխատողներից բարձր տիպի մարքսիստական խմբակներ կազմելը.

բ) սկզբունքային մարքսիստական դրականությունը մայրենի լեզվով զարդացնելը.

գ) Արևելքի ժողովուրդների Համալսարանը և նրա տեղական բաժանմունքներն ուժեղացնելը.

դ) աղբյային կոմկուսների կենտկոմներին կից տեղական աշխատողներից հրահանուչական խմբեր ստեղծելը.

ե) մայրենի լեզվով կուսակցական մասսայական դրականությունը զարդացնելը.

զ) հանրապետություններում կուս-դատախառնական աշխատանքն ուժեղացնելը.

է) հանրապետություններում յերկուստարդության մեջ աշխատանքն ուժեղացնելը:

4) Նկատի ունենալով այն հակադաս նշանակությունը, վոր ունի պատասխանատու աշխատողների դործունեյությունը ախտնում ու անկախ հանրապետություններում և առհասարակ ծայրամասերում (տվյալ հանրապետության աշխատավորության կապն ամբողջ մնացած Միության աշխատավորության հետ իրականացնելը), համազումարը կկ-ին հանձնարարում է հոգ տարականացնելը), համազումարը կկ-ին հանձնարարում է հոգ տանել այդ աշխատողների, առանձնապես ուշադիր ընտրության մասին այն նկատառումով, վոր նրանց կազմը լիովին սուպահովի կուսակցության վճիռների իրական կենսադործումը աղբյային հարցի վերաբերմամբ:

## ԾԱՌՆԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Գաշնակները—«Դաշնակցութիւն» կուսակցութիւնը—Հայկական մանր-բուրժուական նացիոնալիստական կուսակցութիւն է, վորը ծագել է 90-ական թվականներէ սկզբներին, ըստ իր ծրագրի հարում եր ուսական ետերներին: Ռեակցիայի և պատերազմի տարիներին կատարում եր հայ բուրժուազիայի մարտական ավանգարդի և ցարկզմի շահերի պաշտպանի դերը: 1918—20 թվականներին, կանգնելով տաճկական հրամանատարութեան ստեղծած Հայաստանի բուրժուական հանրապետութեան դրոշմ՝ դաշնակներն այդ հանրապետութիւնը դարձրին անգլո-ֆրանսական ինտերվենտներէ և ուսական սպիտակ-գլխադէրձիկներէ հենակետ՝ խորհրդային իշխանութեան և կոմկուսի դեմ մղու-վող պայքարում: Հայաստանում խորհրդային իշխանութիւն հաստատուելուց հետո՝ արտասահման դադթած նրա լիդերները կատարի պայքար են մղում Ռորհրդային Հայաստանի դեմ:—18

2 Մուսավաքիստները—«Մուսավաթ» կուսակցութիւնը—թուրք բուրժուա-«դեմոկրատական» մի կուսակցութիւն է, վորը ծագել է 1918 թ. Բագլում-տուրքում և պանիսլամիզմով ու պանթյուրքիզմով: 1918 թ. Ադրբեջանում հանդիսացել է հակահեղափոխական գլխավոր ուժը, վորն ապստամբութիւն է բարձրացրել Բագլի կոմունայի դեմ, իրեն ողնութեան և կանչել թուրքերին, ավելի ուշ՝ անգլիացիներին, և դաժան պայքար է մղել բանվորական ու դշու-ղացիական շարժման դեմ: 1920 թ. Ադրբեջանում խորհրդային իշխանութիւն հաստատուելուց հետո կորցրեց իր ազդեցութիւնը և ներկայումս իր կողմնա-կիցներն ունի ինտերվենցիայի համար աշխատող արտասահմանյան եմիգրանտ-ներէ մեջ միայն:—18:



1940

Ազգային մոմենտները կուսակցական և պետական շինարարութեան մեջ (Ձեկուցում ՌԿ(Բ)Կ XII համագումարում 1923 թ. ապրիլի 23-ին) . . . . .	5
Յեղափոխական խոսք Հավելված	28
Ազգային մոմենտները կուսակցական և պետական շինարարութեան մեջ (1923 թ. ապրիլին ՌԿ(Բ)Կ XII համագումարի ընդունած բանաձևը) . . . . .	35
Մանուֆազրություններ . . . . .	48

Թարգմ. Պ. Արեյան  
Տեխն. խմբ. Ս Խաչատրյան  
Սրբազրիչ Վ. Զիպեյան  
Կոնտրոլ սրբազրիչ Լ. Արսվյան

---

Գլավիտի լիազոր Ի 9705  
հրատ. № 167, պատվեր № 122, տիրույթ 10.000  
Հանձնված և արտադրութեան 7/VIII 1937 թ.  
Մտորագրված և տպագրելու 16/VIII 1937 թ.  
գին՝ 50 Կ.

---

Հայկոսհրատի ապարան, Յերևան, Ալավերդյան № 71

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Եջ	Տաղ	Տպված է	Պետք է կարդալ
11	6 ն.	մասսաները	տաբուրները
16	16 ն.	գործողութիւնների ամբողջ ուժը և պայ- քարի ամբողջ ուժը...	մեր գործողութիւնների ամբողջ ուժը և մեր պայքարի ամբողջ ուժը
24	5 ն.	140 միլիոն	վաչ պակաս քան, 140 միլիոն
25	18 վ.	նոր	վաչ



211

ЗК 33

U-90

~~9160 50-6~~

И С Т А Л И Н  
КАЦИОНАЛЬНЫЕ МОМЕНТЫ  
В ПАРТИЙНОМ И ГОСУДАРСТВЕННОМ  
СТРОИТЕЛЬСТВЕ

Архивиздат. Брест, 1997

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0021349

A 6820